# «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

# Միջանկյալ Ֆինանսական հաշվետվություններ

2020թ. սեպտեմբերի 30-ին
ավարտված ինն ամիսների համար

## Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին միջանկյալ հաշվետվություն……………………………………………………………………………………..2
Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն..........……………………………...3
Դրամական հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն………………………………………4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն……….......5
Միջանկյալ Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ…………………6

| | Ծնթգ. | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 5 | 1,542,013 | 4,815,308 | 1,715,081 | 5,083,633 |
| Տոկոսային ծախս | 5 | (921,526) | (2,798,314) | (1,008,814) | (2,949,960) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 5 | **620,487** | **2,016,994** | **706,267** | **2,133,673** |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ | | 35,922 | 103,499 | 36,658 | 99,596 |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | | (24,582) | (74,850) | (22,346) | (62,690) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ** | | **11,340** | **28,649** | **14,312** | **36,906** |
| Զուտ օգուտ / (վնաս) արտարժութային գործառնություններից | | 27,602 | (23,140) | 25,975 | 30,713 |
| Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով | | 183,071 | 658,358 | - | - |
| Զուտ այլ գործառնական (ծախս) / եկամուտ | | (28,749) | (95,044) | (29,251) | 328,307 |
| **Գործառնական եկամուտ** | | **813,751** | **2,585,817** | **717,303** | **2,529,599** |
| Ներդրումային արժեթղթերի և այլ ֆինանսական ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի, վարկ տրամադրելու պարտավորվածությունների արժեզրկումից վերադարձ/ (կորուստներ) | 6 | (25,764) | (191,913) | 81,616 | 235,506 |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (202,110) | (624,867) | (204,839) | (532,424) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 7 | (193,869) | (501,612) | (119,586) | (396,273) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **392,008** | **1,267,425** | **474,494** | **1,836,408** |
| Շահութահարկի գծով ծախս | 8 | (70,742) | (282,724) | (134,816) | (424,028) |
| **Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ** | | **321,266** | **984,701** | **339,678** | **1,412,380** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հաշվետու ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի** | | | | | |
| *Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ. | | | | | |
| - իրական արժեքի զուտ փոփոխություն | | (7,361) | 290,127 | 290,299 | 371,297 |
| - շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար | | (148,924) | (574,171) | - | - |
| **Այլ համապարփակ եկամուտ / (վնաս) հաշվետու ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի** | | **(156,285)** | **(284,044)** | **290,299** | **371,297** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ** | | **164,981** | **700,657** | **629,977** | **1,783,677** |

2-ից 85-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հոկտեմբերի 15-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Ստեփանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Անի Սարգսյան
Ֆինանսների և վարչարարության գլխավոր վարչության պետ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնրգ. | 30 սեպտեմբեր 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբեր 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9 | 13,811,955 | 15,249,753 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 10 | 4,210,322 | 6,687,361 |
| Բանկերին տրված վարկեր | 11 | 14,156,389 | 17,013,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 12 | 37,667,607 | 34,517,722 |
| Ներդրումային արժեթղթեր | 13 | 30,217,262 | 34,981,288 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 14 | 655,054 | 491,361 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 15 | 1,626,349 | 1,411,137 |
| Առգրավված ակտիվներ | 12 | 881,660 | 832,586 |
| Այլ ակտիվներ | | 421,632 | 284,363 |
| **Ընդամենն ակտիվներ** | | 103,648,230 | 111,468,810 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 709,588 | 694,701 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 16 | 59,472,934 | 68,172,012 |
| Այլ ներգրավված միջոցներ | 17 | 3,680,964 | 3,757,424 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | 17, 18 | 7,904,115 | 7,659,172 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | - | 137,877 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | 592,862 | 505,369 |
| Վարձակալության գծով պարտավորություն | | 464,217 | 479,726 |
| Այլ պարտավորություններ | | 410,244 | 349,880 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | 73,234,924 | 81,756,161 |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 19 | 26,249,100 | 26,249,100 |
| Էմիսիոն եկամուտ | | 257,149 | 257,149 |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ | | 2,107,494 | 2,391,538 |
| Չբաշխված շահույթ | | 1,799,563 | 814,862 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | 30,413,306 | 29,712,649 |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | 103,648,230 | 111,468,810 |

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| | Ծնթգ. | 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամսյա ժամանակաշրջան հազ. դրամ | 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամսյա ժամանակաշրջան հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ** | | | |
| Ստացված տոկոսներ | | 4,394,647 | 4,431,455 |
| Վճարված տոկոսներ | | (3,160,330) | (2,931,809) |
| Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ | | 102,897 | 99,848 |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | | (74,829) | (62,691) |
| Զուտ մուտքեր ներդրումային արժեթղթերով գործառնություններից | | 704,770 | - |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 63,897 | 61,911 |
| Վճարված հարկեր (բացառությամբ շահութահարկի) | | (9,599) | (282,433) |
| Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին | | (616,611) | (523,043) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | | (370,474) | (353,573) |
| Այլ վճարումներ | | (98,562) | (111,431) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Ներդրումային արժեթղթեր | | 3,290,326 | (2,857,794) |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | | 2,552,193 | 267,616 |
| Բանկերին տրված վարկեր | | 4,724,370 | (647,926) |
| Հաճախորդներին տրված վարկեր | | (2,935,630) | 2,837,737 |
| Այլ ակտիվներ | | (2,360) | 638,232 |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 14,130 | (435,343) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | (9,247,923) | 4,355,900 |
| Այլ պարտավորություններ | | (59,852) | 81,600 |
| **Գործառնական գործունեությունից ստացված/ (օգտագործված) զուտ դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը** | | **(728,940)** | **4,568,256** |
| Վճարված շահութահարկ | | (290,851) | (128,843) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ/ (գործունեությամբ օգտագործված) դրամական հոսքեր** | | **(1,019,791)** | **4,439,413** |
| **ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ | | (599,146) | (74,528) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր** | | **(599,146)** | **(74,528)** |
| **ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ** | | | |
| Այլ փոխառությունների մարում | | (26,452) | (342,919) |
| Վարձավճարներ | | (52,479) | - |
| **Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր** | | **(78,931)** | **(342,919)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)** | | **(1,697,868)** | **4,021,966** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 259,871 | (327,401) |
| Պարտքային կորստի գծով պահուստի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 199 | (761) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | | 15,249,753 | 11,197,943 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | 9 | **13,811,955** | **14,891,747** |

Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | Չբաշխված շահույթ/ (կուտակված վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.** | 26,249,100 | 257,149 | 1,359,192 | (719,868) | **27,145,573** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ | - | - | - | 1,412,380 | **1,412,380** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ. | | | | | |
| - իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | 371,297 | - | **371,297** |
| - շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | - | **-** |
| Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | **371,297** | - | **371,297** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **371,297** | **1,412,380** | **1,783,677** |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2019թ.** | **26,249,100** | **257,149** | **1,730,489** | **692,512** | **28,929,250** |
| | | | | | |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.** | **26,249,100** | **257,149** | **2,391,538** | **814,862** | **29,712,649** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ | - | - | - | 984,701 | **984,701** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ. | | | | | |
| - իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | 290,127 | - | **290,127** |
| - շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար՝ առանց հետաձգված հարկի | - | - | (574,171) | - | **(574,171)** |
| **Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **(284,044)** | **-** | **(284,044)** |
| **Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք** | **-** | **-** | **(284,044)** | **984,701** | **700,657** |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2020թ.** | **26,249,100** | **257,149** | **2,107,494** | **1,799,563** | **30,413,306** |

# 1 Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է 2007թ-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ամիրյան փ. 18/3: Բանկն ունի երկու մասնաճյուղ:

Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի սեփականատերն է «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ին: Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Ֆրանսուա Բասիլը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 24-ում:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

# 2 Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍ 34 « Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» պահանջների համաձայն և պետք է դիտարկվեն Բանկի 2019թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների («վերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններ») հետ մեկտեղ:

## (բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

## (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

## (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

### Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i):
- չափանիշների սահմանում որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 20 (բ):

**Ենթադրություններ և գնահատման անորոշություն**

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

– ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 20 (բ),
– ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի գնահատում – Ծանոթագրություն 25,
– կապակցված կողմից ստացված փոխառությունների և մայր կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառությունների ֆորվարդների և օպցիոնների իրական արժեք – Ծանոթագրություններ 17 և 18:

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

***ՖՀՄՍ 16***

ՖՀՄՍ 16 ստանդարտը սահմանում է մեկ՝ հաշվապահական հաշվեկշռում հաշվառման մոդել վարձակալների համար: Վարձակալը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ, որն իրենից ներկայացնում է հիմքում ընկած ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորություն, որն իրենից ներկայացնում է վարձավճարներ վճարելու պարտականություն: Նախատեսված են ճանաչումից ազատումներ կարճաժամկետ վարձակալության և փոքրարժեք ակտիվների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

**(ա) Վարձակալության սահմանումը**

Նախկինում Բանկը պայմանագրի սկզբում որոշում էր, արդյոք համաձայնությունը հանդիսանում էր վարձակալության պայմանագիր կամ պարունակում էր վարձակալություն՝ ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»* համաձայն: Այժմ Բանկը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն վարձակալության սահմանման հիման վրա:

Պայմանագրի սկզբում Բանկը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը: Գնահատելու համար, արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Բանկն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս Բանկը որոշել է օգտվել գործնական բնույթի պարզեցումից, որը թույլ է տալիս չվերանայել վարձակալության գործարքների բացահայտման համար նախկինում իրականացված գնահատման արդյունքները: Բանկը ՖՀՄՍ 16-ը կիրառել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում որոշակիացվել էին որպես վարձակալության պայմանագրեր: Պայմանագրերը, որոնք չէին որոշակիացվել որպես վարձակալության պայմանագրեր ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն, չեն վերագնահատվել ՖՀՄՍ 16-ի պահանջներին համապատասխանող վարձակալություն բացահայտելու համար: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը կիրառվել է միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել կամ փոփոխվել են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո:

### (բ) Բանկը՝ որպես վարձակալ

Որպես վարձակալ Բանկը վարձակալում է նոր գրասենյակային տարածք 2019թ. նոյեմբերից: Նախկինում Բանկը վարձակալության պայմանագրերը դասակարգում էր որպես գործառնական կամ ֆինանսական վարձակալություն ելնելով իր գնահատումից, արդյոք վարձակալության դեպքում Բանկին են փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ Բանկը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ վարձակալության այս պայմանագրերի մեծ մասի համար, այսինքն՝ վարձակալությունն արտացոլվում է հաշվապահական հաշվեկշռում:

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

### (գ) Բանկը՝ որպես վարձատու

Բանկը վարձակալության չի հանձնում իր ներդրումային գույքը, ներառյալ սեփական գույքը և օգտագործման իրավունքի ձևով ակտիվները: Բանկի՝ որպես վարձատուի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը տարբերվում է ՀՀՄՍ 17-ով նախատեսված քաղաքականությունից, և ՖՀՄՍ 16-ին անցնելիս Բանկից չի պահանջվում կատարել ճշգրտումներ վարձակալության այն պայմանագրեր գծով, որոնցում այն հանդես է գալիս որպես վարձատու:

# 4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Բացառությամբ Ծանոթագրություն 3-ում բացահայտված փոփոխությունների, ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է Բանկի կողմից այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### (ա) Արտարժույթ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են Բանկի ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա

փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկից առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված փոխարժեքային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

## (բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող նվազագույն պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## (գ) Տոկոսներ

*Արդյունավետ տոկոսադրույք*

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ դիտարկելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստները: Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով գնահատված ապագա դրամական հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստները:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի գծով ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր միջնորդավճարները և գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը: Գործարքի գծով ծախսումները ներառում

են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

### *Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք*

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված սկզբնական և մարման ենթակա գումարների միջև տարբերության կուտակային ամորտիզացիան և, ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստով:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքն է նախքան ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գծով ճշգրտումը:

### *Տոկոսային եկամտի և ծախսի հաշվարկ*

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին: Տոկոսային եկամուտը և ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լողացող դրույքով գործիքների դրամական հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական դրույքների փոփոխությունները արտացոլելու նպատակով: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է նաև իրական արժեքի հեջի ճշգրտումները արտացոլելու համար այն ամսաթվի դրությամբ, երբ սկսվում է համապատասխան ճշգրտման ամորտիզացիայի հաշվարկը:
Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո պարտքային առումով արժեզրկված դարձած ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվն այլևս չի համարվում պարտքային առումով արժեզրկված, տոկոսային եկամտի հաշվարկը կրկին իրականացվում է համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամտի հաշվարկը չի իրականացվում համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը նվազում է:

Տեղեկատվությունն այն մասին, թե որ դեպքերում են ֆինանսական ակտիվները համարվում պարտքային առումով արժեզրկված, ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

### *Ներկայացում*

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկած տոկոսային եկամուտը ներառում է՝

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսը ներառում է ամորտիզացված արժ»քով չափվող ֆինանսական պարտավորություննե»րի գծով տոկոսային ծախսը:

## (դ) Վճարներ և միջնորդավճարներ

Վճարների և միջնորդավճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 4 (գ)):

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Վճարների և միջնորդավճարների տեսքով այլ ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

## (ե) Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

### *i. Դասակարգում*

#### ***Ֆինանսական ակտիվներ***

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով օգուտները և կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ստորև ներկայացվածների, որոնք ճանաչվում են նույն կերպ ինչ որ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը և կորուստները.

- արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ,
- ակնկալվող պարտքային կորուստ և հակադարձումներ և
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ և վնասներ:

Երբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ կորուստը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթ կամ վնաս:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Այս բաժնային գործիքների գծով օգուտները և կորուստները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ, և շահույթում կամ վնասում արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահաբաժինն ակնհայտորեն ներկայացնում է ներդրման ինքնարժեքի մասի վերականգնումը, որի դեպքում ճանաչվում է այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում: Այլ համապափակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտները և կորուստները փոխանցվում են չբաշխված շահույթ՝ ներդրման օտարման պահին:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Բիզնես մոդելի գնահատում**

Բանկը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք

ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել տոկոսային որոշակի եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվներով, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:

- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Բանկի ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները (օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա):
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը չի դիտարկվում մեկուսի, այն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր վերլուծության մաս առ այն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Բանկի առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակով կամ կառավարվում են և որոնց արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվներ վաճառելու համար:

**Գնահատում, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար, արդյոք պայմանագրային դրամական հոսքերը միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ են, Բանկը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դիտարկումը ներառում է այն գնահատումը, արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այս պայմանը: Գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը և ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Բանկի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածությունների), և
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

**Վերադասակարգում**

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

***Ֆինանսական պարտավորություններ***

Բանկն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

**Վերադասակարգում**

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

***ii. Ապաճանաչում***

**Ֆինանսական ակտիվներ**

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է դրամական հոսքեր ստանալու իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ փոխանցում, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:
Ֆինանսական ակտիվն ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ կորստի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ, ինչպես բացատրվում է Ծանոթագրություն 4 (ե) (i) կետում: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ պահպանում է, ոչ էլ փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, և պահպանում է ակտիվի նկատմամբ հսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այդ ֆինանսական ակտիվում իր շարունակվող ներգրավվածության չափով, որն այն չափն է, որով Բանկը ենթարկվում է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը

**Ֆինանսական պարտավորություններ**

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

### *iii. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխում*

**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է, արդյոք փոփոխված ակտիվի դրամական հոսքերը էականորեն տարբեր են: Եթե դրամական հոսքերը էականորեն տարբեր են («էական փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները: Որպես փոփոխության մաս ստացված վճարները հաշվառվում են հետևյալ կերպ.

- վճարները, որոնք դիտարկվում են նոր ակտիվի իրական արժեքը որոշելիս, և վճարները, որոնք իրենցից ներկայացվում են պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումների հատուցում, ներառվում են ակտիվի սկզբնական չափման մեջ,
- մյուս վճարները ներառվում են շահույթում կամ վնասում՝ որպես ապաճանաչումից օգուտի կամ կորուստի մաս:

Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դրամական հոսքերի փոփոխությունները չեն դիտարկվում որպես փոփոխություն, եթե բխում են գոյություն ունեցող պայմանագրային պայմաններից, օրինակ՝ Բանկի կողմից տոկոսադրույքների փոփոխությունը ՀՀ ԿԲ-ի հիմնական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում, եթե վարկային պայմանագրով Բանկն իրավունք ունի կատարել նման փոփոխություն:

Բանկն իրականացնում է փոփոխության էական լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը էականորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Բանկը գնահատում է փոփոխության էական լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը էականորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը կիրառում է կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործված ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը էական է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որը հանգեցնում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանությանը:

Եթե դրամական հոսքերի փոփոխությունը պայմանավորված է փոխառուի ֆինանսական դժվարություններով, ապա որպես կանոն փոփոխության նպատակն է առավելագույն չափով հետ ստանալ/վերականգնել ակտիվը պայմանագրի սկզբնական պայմաններով, այլ ոչ՝

սկզբնավորել նոր ակտիվ նշանակալիորեն տարբեր պայմաններով: Եթե Բանկը մտադիր է այնպես փոփոխել ֆինանսական ակտիվը, որպեսզի ներվեն դրամական հոսքերը, ապա այն նախ դիտարկում է, արդյոք ակտիվի մի մասը պետք է դուրսգրվի նախքան փոփոխությունը կատարելը (տես՝ ստորև դուրսգրման քաղաքականություն): Այս մոտեցումն ազդում է քանակական գնահատման արդյունքի վրա և նշանակում է, որ ապաճանաչման չափանիշները միշտ չէ որ բավարարվում են նման դեպքերում: Բանկն իրականացնում է նաև որակական գնահատում գնահատելու համար փոփոխության նշանակալի լինելը:

Եթե ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, Բանկը նախ վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, և արդյունքում առաջացող ճշգրտումը ճանաչում է որպես փոփոխումից օգուտ կամ կորուստ շահույթում կամ վնասում: Լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Փոփոխման շրջանակում ցանկացած կրած ծախսում կամ վճար կամ ստացված վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Եթե նման փոփոխությունն իրականացվում է փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա օգուտը կամ կորուստը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Մյուս դեպքերում այն ներկայացվում է որպես արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ:

Հաստատուն տոկոսադրույքով վարկերի համար, որոնց դեպքում փոխառուն հնարավորություն ունի վաղաժամ մարել վարկն անվանական արժեքով՝ առանց էական տուգանքի, Բանկը հաշվառում է տոկոսադրույքի փոփոխությունը մինչև ընթացիկ շուկայական տոկոսադրույքի մակարդակը՝ կիրառելով լողացող տոկոսադրույքով ֆինանսական գործիքների համար գործող ուղեցույցը: Սա նշանակում է, որ արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է առաջընթաց:

**Ֆինանսական պարտավորություններ**

Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վճարված հատուցումը ներառում է փոխանցված ոչ ֆինանսական ակտիվները (առկայության դեպքում) և ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ նոր փոփոխված ֆինանսական պարտավորությունը:

Բանկն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Բանկը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Եթե ֆինանսական պարտավորության փոփոխությունը չի բավարարում ապաճանաչման պայմանները, պարտավորության ամորտիզացված արժեքը վերահաշվարկվում է, զեղչելով փոփոխված դրամական հոսքերը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, և արդյունքում առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Լողացող դրույքով ֆինանսական պարտավորությունների համար փոփոխումից օգուտը կամ կորուստը հաշվարկելու համար օգտագործված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է արտացոլելու համար ընթացիկ շուկայական պայմանները փոփոխության պահին: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական ակտիվի մնացորդային ժամանակահատվածում: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտում և ամորտիզացվում է փոփոխված ֆինանսական պարտավորության մնացորդային ժամանակահատվածում գործիքի արդյունավետ տոկոսադրույքի վերահաշվարկի միջոցով:

### *iv. Արժեզրկում*

Տես՝ նաև Ծանոթագրություն 20 (բ):

Բանկը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվներ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր և
- փոխատվության հանձնառություններ:

Բաժնային գործիքներում ներդրումների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվում:

Բանկը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորստներին հավասար գումարով.

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող հաշվետու ասմաթվի դրությամբ և
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր (տես՝ Ծանոթագրություն 20 (բ)):

Բանկը չի կիրառում ցածր պարտաքային ռիսկի հետ կապված ազատումը որևէ ֆինանսական գործիքի համար:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ:

**Ակնկալվող պարտքային կորստների չափում**

Ակնկալվող պարտքային կորուստները պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են և չափվում է հետևյալ կերպ.

- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան Բանկին հասանելիք դրամական հոսքերի և Բանկի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է),
- *ֆինանսական ակտիվներ, որոնք պարտքային առումով արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ.* որպես համախառն հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերություն,

- *չօգտագործված փոխատվության հանձնառություններ.* որպես հետևյալ նշվածների միջև տարբերության ներկա արժեք՝ պայմանագրային դրամական հոսքերի, որոնք ենթակա են վճարման Բանկին, եթե օգտագործում է փոխառությունը ստանալու իրավունքը, և այն դրամական հոսքերի, որոնք Բանկն ակնկալում է ստանալ,
- *ֆինանսական երաշխավորության պայմանագրեր.* որպես այն ակնկալվող վճարումների ներկա արժեք, որոնք փոխհատուցում են տիրապետողին կրած պարտքային կորուստը՝ հանած այն գումարները, որոնք Բանկն ակնկալում է հետ ստանալ:

Տես՝ նաև Ծանոթագրություն 20 (բ):

**Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերաբանակցվում են կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով, գնահատվում է ֆինանսական ակտիվն ապաճանաչելու անհրաժեշտությունը (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (ii)), և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում (տես՝ Ծանոթագրություն 20 (բ)):
- Եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից առաջացող վերջնական դրամական հոսքեր՝ վերջինիս ապաճանաչման ժամանակ: Այս գումարը ներառվում է գոյություն ունեցող ակտիվի գծով դրամական պակասուրդի հաշվարկում, որը զեղչվում է ապաճանաչման ակնկալվող ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվը՝ կիրառելով գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

**Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ

ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից (որոնք դիտարկում ենք որպես 3-րդ փուլի ֆինանսական ակտիվներ): Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, անհատներին տրվող վարկերի դեպքում պարտքային առումով արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Պետական պարտատոմսերում ներդրման պարտքային առումով արժեզրկված լինելը գնահատելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- Վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությունում:
- Վարկունակության վարկանիշային գործակալությունների գնահատումները:
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:
- Պարտքի պայմանների վերանայման հավանակությունը, որի արդյունքում տիրապետողները կարող են վնաս կրել պարտքը կամավոր կամ պարտադիր կերպով ներելու պատճառով:
- Գործող միջազգային աջակցման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս որպես «վերջին հնարավոր վարկատու» տվյալ երկրին տրամադրել անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև կառավարությունների և գործակալությունների հրապարակային հայտարարություններում նշված այդ մեխանիզմները կիրառելու մտադրությունը: Սա ներառում է նշված մեխանիզմների աշխատանքի արդյունավետության և, անկախ քաղաքական մտադրություններից, պահանջվող չափանիշները բավարարելու կարողության առկայության գնահատումը:

**Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

- *ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*՝ որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից,

- *փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր*՝ սովորաբար որպես պահուստ,
- *երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներից առանձին*՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և
- *իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ*՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում:

**Դուրսգրումներ**

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի ամբողջությամբ վերցրած ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը վերականգնելու ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Բանկը որոշում է, որ փոխառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ բավարար դրամական հոսքեր դուրսգրման ենթակա գումարները մարելու համար: Այս գնահատումն իրականացվում է առանձին յուրաքանչյուր ակտիվի համար:

Նախկինում դուրսգրված գումարների փոխհատուցումը ներառվում է «ֆինանսական գործիքների արժեզրկումից կորուստներ» հոդվածում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Դուրսգրված ֆինանսական ակտիվների գծով կարող են դեռևս կիրառվել հարկադիր միջոցներ/պարտքերի գանձման միջոցներ՝ վճարման ենթակա գումարների փոխհատուցման Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանություն ապահովելու համար:

**Ֆինանսական ակտիվի անբաժանելի մաս չհանդիսացող ֆինանսական երաշխավորության պայմանագրեր**

Բանկը գնահատում է, արդյոք ֆինանսական երաշխավորության պայմանագիրը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, որը հաշվառվում է որպես այդ գործիքի բաղադրիչ, թե առանձին հաշվառվող պայմանագիր: Այս գնահատումն իրականացնելիս Բանկը դիտարկում է հետևյալ գործոնները.

- արդյոք երաշխավորությունը նախատեսված է պարտքային գործիքի պայմանագրի պայմաններով,
- արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
- արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում:

Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

### *v. Նախորոշում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող*

**Ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական ճանաչման պահին Բանկը որոշ ֆինանսական ակտիվներ նախորոշել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, քանի որ նման նախորոշումը վերացնում է կամ էապես նվազեցնում է այն հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական պարտավորություններ**

Բանկը որոշ ֆինանսական պարտավորություններ նախորոշել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող հետևյալ հանգամանքներից որևէ մեկում.

- պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են ներքին հաշվետվություններում իրական արժեքի հիմունքով, կամ
- նախորոշումը վերացնում կամ էապես նվազեցնում է այն հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

## (զ) Պարունակվող ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները կարող են պարունակվել մեկ այլ պայմանագրում (հիմնական պայմանագիր): Բանկը պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառում է հիմնական պայմանագրից առանձին, երբ.

- հիմնական պայմանագիրը չի հանդիսանում ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում գտնվող ակտիվ,
- հիմնական պայմանագիրն ինքնին չի հաշվառվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- պարունակվող ածանցյալ գործիքի պայմանները կհամապատասխանեին ածանցյալ գործիքի սահմանմանը, եթե ներառվեին առանձին պայմանագրում և
- պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ:

Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմում են որակվող դրամական հոսքերի կամ զուտ ներդրման հեջավորման փոխհարաբերության մաս:

## (է) Հաճախորդներին տրված վարկեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր» հոդվածը ներառում է ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

## (ը) Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «ներդրումային արժեթղթեր» հոդվածը ներառում է.

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (i)) և
- բաժնային ներդրումային արժեթղթերը, որոնք նախորոշված են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (i)):

## (թ) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

## (ժ) Ֆինանսական բաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:
Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

## (ի) Հիմնական միջոցներ

### *(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

### *(ii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| – շենքեր | 50 տարի |
| – համակարգիչներ և կապի սարքավորումներ | 1-5 տարի |
| – գույք | 5-10 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |

Վարձակալված գույքի բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնի ընթացքում:

## (լ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 1-ից 10 տարի:

## (խ) Առգրավված ակտիվներ

Բանկը ճանաչում է առգրավված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն ունի իրացման ամբողջական և վերջնական իրավունքներ գրավի նկատմամբ:

Առգրավված ակտիվները չափվում են հետևյալ երկու մեծությունների նվազագույնով՝ հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման պահին առգրավված ակտիվները չափվում են այն վարկի

հաշվեկշռային արժեքով, որի գծով տեղի է ունեցել պարտազանցություն՝ ներառյալ գրավի առգրավման ընթացքում կրած ծախսումները: Իրական արժեքը՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, իրենից ներկայացնում է գրավի գնահատված վաճառքի գինը բնականոն գործունեության ընթացքում՝ հանած հարակից վաճառքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո առգրավված ակտիվները վերանայվում են վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից և համապատասխանաբար վերադասակարգվում են չափանիշները բավարարելու դեպքում:
Առգրավված ակտիվների օտարումից օգուտը և կորուստը ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ գործառնական եկամուտ» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

## (ծ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## (կ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

## (հ) Բաժնետիրական կապիտալ

### *(i) Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի

լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

### *(ii) Էմիսիոն եկամուտ*

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

### *(iii) Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

## (ձ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

### *(i) Ընթացիկ հարկ*

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

### *(ii) Հետաձգված հարկ*

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում այն ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Բանկն ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են չափով, որքանով հավանական է ապագա հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և զեղչերը: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են չափով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

# 5 Զուտ տոկոսային եկամուտ

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 778,150 | 2,293,232 | 738,595 | 2,239,104 |
| Ներդրումային արժեթղթեր | 651,084 | 2,108,533 | 770,479 | 2,201,740 |
| Բանկերին տրված վարկեր | 92,138 | 303,090 | 123,224 | 370,188 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 20,240 | 95,463 | 80,486 | 262,389 |
| Այլ | 401 | 14,990 | 2,297 | 10,212 |
| | 1,542,013 | 4,815,308 | 1,715,081 | 5,083,633 |
| **Տոկոսային ծախս** | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 688,679 | 2,115,107 | 792,218 | 2,287,171 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | 128,600 | 372,716 | 123,251 | 370,455 |
| Այլ ներգրավված միջոցներ | 78,179 | 232,111 | 80,570 | 245,915 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 13,788 | 40,855 | 12,775 | 46,419 |
| Վարձակալություն | 12,280 | 36,976 | - | - |
| Ռեպո համաձայնագրեր | - | 549 | - | - |
| | 921,526 | 2,798,314 | 1,008,814 | 2,949,960 |
| | 620,487 | 2,016,994 | 706,267 | 2,133,673 |

# 6 Ներդրումային արժեթղթերի, այլ ֆինանսական ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի և փոխատվության հանձնառությունների արժեզրկման վերականգնում/(արժեզրկումից կորուստներ)

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր և վարկ տրամադրելու պարտավորվածություններ | (38,345) | (220,564) | (45,541) | 238,139 |
| Ներդրումային արժեթղթեր և այլ ֆինանսական ակտիվներ | 12,581 | 28,651 | 127,157 | (2,633) |
| | (25,764) | (191,913) | 81,616 | 235,506 |

# 7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Մաշվածություն և ամորտիզացիա | 37,238 | 103,623 | 15,702 | 49,483 |
| Գովազդ և շուկայավարում | 33,268 | 73,250 | 25,451 | 78,905 |
| Համակարգչային ծրագրերի սպասարկում | 19,756 | 61,047 | 14,330 | 42,748 |
| Ապահովագրություն | 14,122 | 40,055 | 10,860 | 32,099 |
| Վերանորոգման և սպասարկման ծախսեր | 12,817 | 38,217 | 8,244 | 25,159 |
| Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի | 17,110 | 35,445 | 8,508 | 50,324 |
| Անվտանգության ծառայություն | 8,151 | 24,333 | 6,637 | 19,710 |
| Մասնագիտական ծառայություններ | 5,964 | 24,000 | 6,996 | 26,593 |
| Կապի և տեղեկատվ. ծառայություններ | 5,477 | 15,160 | 4,416 | 13,297 |
| Վարձակալության գծով ծախսեր | 5,127 | 15,123 | - | - |
| Վերապատրաստման ծախսեր | 3,322 | 9,124 | 900 | 2,099 |
| Գրասենյակային ծախսեր | 3,109 | 7,394 | 1,480 | 4,932 |
| Անդամակցության ծախսեր | 1,843 | 5,631 | 1,893 | 5,681 |
| Իրավաբանական ծառայություններ | 2,720 | 5,320 | 2,220 | 4,820 |
| Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծախսեր | 1,417 | 4,617 | 1,791 | 4,819 |
| Գործուղման ծախսեր | - | - | 1,093 | 4,216 |
| Այլ | 22,428 | 39,273 | 9,065 | 31,388 |
| | 193,869 | 501,612 | 119,586 | 396,273 |

# 8 Շահութահարկ

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս | (9,213) | (78,959) | 4,923 | (211,772) |
| Նախորդ տարվա հարկի թերագնահատում | | (53,920) | | (78,843) |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | (61,529) | (149,845) | (139,739) | (133,413) |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **(70,742)** | **(282,724)** | **(134,816)** | **(424,028)** |

2020թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 18% (2019թ-ին՝ 20%):

## Արդյունավետ հարկային դրույքի համադրում սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար

| | Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | % | Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | % |
|---|---|---|---|---|
| Շահույթ նախքան հարկումը | 1,267,425 | 100% | 1,836,408 | 100% |
| Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով | (228,137) | (18) | (367,282) | (20) |
| Չնվազեցվող ծախսեր | (667) | (0) | 22,097 | 1 |
| Նախորդ տարվա հարկի թերագնահատում | (53,920) | (3) | (78,843) | (4) |
| | **(282,724)** | **(21)** | **(424,028)** | **(23)** |

## (ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունները առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2020թ. և 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2020թ. և 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում:

| **Սեպտեմբերի 30, 2020թ.**<br>**հազ. դրամ** | **1 հունվարի 2020թ.** | **Շահույթում կամ վնասում ճանաչված** | **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված** | **30 սեպտեմբերի 2020թ.** |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (5,525) | 865 | - | (4,660) |
| Ներդրումային արժեթղթեր | (525,003) | | 62,352 | (462,651) |
| Ներդրումային արժեթղթեր | 21,006 | (78) | | 20,928 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | (12,037) | 4,458 | - | (7,579) |
| Բանկերին տրված վարկեր | (20,323) | 5,158 | - | (15,165) |
| Հաճախորդներին տրված վարկեր | 49,140 | (153,130) | - | (103,990) |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | (9,030) | (666) | - | (9,696) |
| Այլ ակտիվներ | 5,470 | (1,261) | - | 4,209 |
| Այլ պարտավորություններ | (9,067) | (5,191) | - | (14,258) |
| | **(505,369)** | **(149,845)** | **62,352** | **(592,862)** |

| **Սեպտեմբերի 30, 2019թ.**<br>**հազ. դրամ** | **1 հունվարի 2019թ.** | **Շահույթում կամ վնասում ճանաչված** | **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված** | **30 սեպտեմբերի 2019թ.** |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (1,901) | (2,470) | - | (4,371) |
| Ներդրումային արժեթղթեր | (296,283) | | (107,116) | (403,399) |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | (11,291) | 544 | - | (10,747) |
| Բանկերին տրված վարկեր | (18,207) | (1,071) | - | (19,278) |
| Հաճախորդներին տրված վարկեր | 170,123 | (128,881) | - | 41,242 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | (8,951) | (812) | - | (9,763) |
| Այլ ակտիվներ | 5,649 | 1,578 | - | 7,227 |
| Այլ պարտավորություններ | (8,947) | (2,301) | - | (11,248) |
| | **(169,808)** | **(133,413)** | **(107,116)** | **(410,337)** |

### (բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2020թ. և 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| | Սեպտեմբերի 30, 2020թ. | | | Սեպտեմբերի 30, 2019թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **Գումարը նախքան հարկումը** | **Հարկի գծով ծախս** | **Գումարը հարկումից հետո** | **Գումարը նախքան հարկումը** | **Հարկի գծով ծախս** | **Գումարը հարկումից հետո** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն | 353,813 | (63,686) | 290,127 | 478,414 | (107,117) | 371,297 |
| Շահույթ կամ վնաս փոխանցված այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն | (700,208) | 126,037 | (574,171) | - | - | - |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | **(346,395)** | **62,351** | **(284,044)** | **478,414** | **(107,117)** | **371,297** |

# 9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | **30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| **Կանխիկ** | **454,467** | **324,818** |
| **Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները** | **10,657,421** | **11,724,645** |
| **Նոստրո հաշիվներ այլ բանկերում** | | |
| - ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկեր | 1,425,735 | 2,041,951 |
| - Այլ օտարերկրյա բանկեր | 1,274,335 | 1,158,545 |
| - Այլ հայկական բանկեր | 1,118 | 1,114 |
| **Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում** | **2,701,188** | **3,201,610** |
| **Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **13,813,076** | **15,251,073** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (1,121) | (1,320) |
| **Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **13,811,955** | **15,249,753** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամկետանց չեն:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող այնպիսի բանկեր, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի (2019թ-ին՝ ոչ մի բանկ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

### Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

Նոստրո հաշիվները վճարահաշվարկային գործունեությանը վերաբերող ՀՀ ԿԲ-ում պահվող մնացորդներ են, որոնք կարող են ելքագրվել տարեվերջին:

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում՝ ՀՀ դրամով ներգրավված միջոցների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված

միջոցների 18%-ի չափով: Օրենսդրությամբ չի սահմանափակվում այս միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված գումարների գծով պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվներում ներառված է 7,689,480 հազար դրամ գումարով պարտադիր պահուստը ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված գումարների համար (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,230,667 հազար դրամ):

# 10 Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| 5 խոշորագույն հայկական բանկերից ստացվելիք գումարներ | - | 1,416,450 |
| Այլ հայկական բանկերից ստացվելիք գումարներ | 4,210,322 | 5,270,911 |
| | **4,210,322** | **6,687,361** |

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ հանդիսացող բանկ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ մեկ բանկ), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 3,109,130 հազար դրամ:

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները ենթակա են վճարման խոշոր հայկական բանկերի կողմից: Այս գումարները ժամկետանց չեն:

### Գրավ

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին 4,465,399 հազար դրամ իրական արժեքով Հայաստանի Հանրապետության կառավարության արժեթղթերը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,205,553 հազար դրամ):

# 11 Բանկերին տրված վարկեր

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց** | 70,000 | 170,000 |
| **Կարճաժամկետ ստացվելիք գումարներ** | 1,509,208 | - |
| **Վարկեր և ավանդներ այլ բանկերում** | | |
| - 5 խոշորագույն հայկական բանկեր | 1,465,670 | 4,797,986 |
| - Այլ հայկական բանկեր | 11,087,834 | 12,022,086 |
| - ՏՀԶԿ անդամ երկրների բանկեր | 81,009 | 79,255 |
| **Ընդամենը վարկեր և ավանդներ այլ բանկերում** | **12,634,513** | **16,899,327** |
| **Ընդամենը բանկերին տրված համախառն վարկեր** | **14,213,721** | **17,069,327** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (57,332) | (56,088) |
| **Ընդամենը բանկերին տրված զուտ վարկեր** | **14,156,389** | **17,013,239** |

Բանկերին տրված վարկերն արժեզրկված չեն:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՏՀԶԿ անդամ երկրների բանկերի վարկերի և ավանդների կազմում ներառված է 81,009 հազար դրամ գումարը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 79,255 հազար դրամ), որը Europay International համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդն է HSBC Bank Plc-ում:

### (ա) ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց

ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոցը վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված ոչ տոկոսակիր միջոց է, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն և որի ելքագրումը սահմանափակված է:

### (բ) Բանկերի նկատմամբ պահանջների կենտրոնացում

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի պայմանագրային կողմ հանդիսացող մեկ բանկ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկ), որի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 4,891,867 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,602,610 հազար դրամ):

## 12 Հաճախորդներին տրված վարկեր

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր** | | |
| **Առևտրային վարկեր** | | |
| Վարկեր խոշոր ընկերություններին | 19,173,190 | 19,330,935 |
| Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին | 2,074,680 | 1,776,456 |
| **Ընդամենը առևտրային վարկեր** | **21,247,870** | **21,107,391** |
| **Մանրածախ վարկեր** | | |
| Հիփոթեքային վարկեր | 14,694,819 | 12,157,771 |
| Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր | 840,083 | 889,732 |
| Վարկային քարտեր | 622,417 | 589,058 |
| Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր | 310,800 | 327,608 |
| Անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկեր | 257,385 | 235,839 |
| Ավտովարկեր | 188,068 | 238,469 |
| Այլ | 183,119 | 61,185 |
| **Ընդամենը մանրածախ վարկեր** | **17,096,691** | **14,499,662** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված համախառն վարկեր** | **38,344,561** | **35,607,053** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (676,954) | (1,089,331) |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված զուտ վարկեր** | **37,667,607** | **34,517,722** |

## (ա) Հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակը

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| | 30 սեպտեմբերի 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| | 1-ին փուլ<br>հազ. դրամ | 2-րդ փուլ<br>հազ. դրամ | 3-րդ փուլ<br>հազ. դրամ | Ընդամենը վարկեր<br>հազ. դրամ |
| **Առևտրային վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 18,292,666 | - | - | 18,292,666 |
| Արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | - | 266,050 | - | 266,050 |
| - մինչև 90 օր ժամկետանց | - | - | - | - |
| - 91-365 օր ժամկետանց | - | - | 614,474 | 614,474 |
| - ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | - | - |
| **Ընդամենը արժեզրկված վարկեր** | - | 266,050 | 614,474 | 880,524 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (205,916) | (47,574) | (226,572) | (480,062) |
| **Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին** | 18,086,750 | 218,476 | 387,902 | 18,693,128 |
| **Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 1,980,272 | - | - | 1,980,272 |
| Արժեզրկված վարկեր | | | | |
| - ոչ ժամկետանց | - | 94,408 | - | 94,408 |
| - ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | - | - |
| **Ընդամենը արժեզրկված վարկեր** | - | 94,408 | - | 94,408 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (7,668) | (5,103) | - | (12,771) |
| **Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | 1,972,604 | 89,305 | - | 2,061,909 |
| **Համախառն առևտրային վարկեր** | 20,272,938 | 360,458 | 614,474 | 21,247,870 |
| **Ընդամենը պարտքային կորստի գծով պահուստ առևտրային վարկերի համար** | (213,584) | (52,677) | (226,572) | (492,833) |
| **Ընդամենը զուտ առևտրային վարկեր** | 20,059,354 | 307,781 | 387,902 | 20,755,037 |
| **Մանրածախ վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 13,394,815 | - | - | 13,394,815 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 864,228 | - | 864,228 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 148,447 | 36,072 | - | 184,519 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 82,953 | - | 82,953 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 45,113 | 45,113 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 36,137 | 36,137 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 87,054 | 87,054 |
| | 13,543,262 | 983,253 | 168,304 | 14,694,819 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (30,879) | (88,233) | (20,235) | (139,347) |
| **Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր** | 13,512,383 | 895,020 | 148,069 | 14,555,472 |
| **Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 725,646 | - | - | 725,646 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 57,575 | - | 57,575 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 6,246 | 1,693 | - | 7,939 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 17,026 | - | 17,026 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 8,640 | 8,640 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 13,432 | 13,432 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 9,825 | 9,825 |
| | 731,892 | 76,294 | 31,897 | 840,083 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (1,813) | (4,960) | (2,792) | (9,565) |
| **Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր** | 730,079 | 71,334 | 29,105 | 830,518 |
| **Վարկային քարտեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 536,452 | - | - | 536,452 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 32,399 | - | 32,399 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 34,257 | - | - | 34,257 |

| | 30 սեպտեմբերի 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| | 1-ին փուլ<br>հազ. դրամ | 2-րդ փուլ<br>հազ. դրամ | 3-րդ փուլ<br>հազ. դրամ | Ընդամենը վարկեր<br>հազ. դրամ |
| - 31-90 օր ժամկետանց | - | 2,545 | - | 2,545 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 8,420 | 8,420 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 8,344 | 8,344 |
| | 570,709 | 34,944 | 16,764 | 622,417 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (9,700) | (4,444) | (3,101) | (17,245) |
| **Ընդամենը զուտ վարկային քարտեր** | 561,009 | 30,500 | 13,663 | 605,172 |
| **Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 275,456 | - | - | 275,456 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 22,044 | - | 22,044 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 4,164 | - | - | 4,164 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 7,462 | - | 7,462 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 1,674 | 1,674 |
| | 279,620 | 29,506 | 1,674 | 310,800 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (1,453) | (6,132) | (579) | (8,164) |
| **Ընդամենը զուտ աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | 278,167 | 23,374 | 1,095 | 302,636 |
| **Ավտովարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 148,259 | - | - | 148,259 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 16,001 | - | 16,001 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 23,049 | - | 23,049 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 759 | 759 |
| | 148,259 | 39,050 | 759 | 188,068 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (331) | (2,871) | (129) | (3,331) |
| **Ընդամենը զուտ ավտովարկեր** | 147,928 | 36,179 | 630 | 184,737 |
| **Անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 190,860 | - | - | 190,860 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 49,992 | - | 49,992 |
| - մինչև 30 օր ժամկետանց | - | 8,151 | - | 8,151 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 8,382 | 8,382 |
| | 190,860 | 58,143 | 8,382 | 257,385 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (488) | (4,600) | (1,381) | (6,469) |
| **Ընդամենը զուտ անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկեր** | 190,372 | 53,543 | 7,001 | 250,916 |
| **Այլ մանրածախ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 183,119 | - | - | 183,119 |
| | 183,119 | - | - | 183,119 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | - | - | - | - |
| **Ընդամենը զուտ այլ մանրածախ վարկեր** | 183,119 | - | - | 183,119 |
| **Համախառն մանրածախ վարկեր** | 15,647,721 | 1,221,190 | 227,780 | 17,096,691 |
| **Ընդամենը պարտքային կորստի գծով պահուստ մանրածախ վարկերի համար** | (44,664) | (111,240) | (28,217) | (184,121) |
| **Ընդամենը զուտ մանրածախ վարկեր** | 15,603,057 | 1,109,950 | 199,563 | 16,912,570 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր** | 35,662,411 | 1,417,731 | 587,465 | 37,667,607 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պարտքային որակի վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 31 դեկտեմբեր 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| | 1-ին փուլ<br>հազ. դրամ | 2-րդ փուլ<br>հազ. դրամ | 3-րդ փուլ<br>հազ. դրամ | Ընդամենը վարկեր<br>հազ. դրամ |
| **Առևտրային վարկեր** | | | | |
| **Վարկեր խոշոր ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 17,904,616 | - | - | 17,904,616 |
| Արժեզրկված վարկեր | | | | |
| - մինչև 90 օր ժամկետանց | - | 609,159 | - | 609,159 |
| - ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | 817,160 | 817,160 |

| | 31 դեկտեմբեր 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը վարկեր |
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ընդամենը արժեզրկված վարկեր | - | 609,159 | 817,160 | 1,426,319 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (189,906) | (80,926) | (727,273) | (998,105) |
| **Ընդամենը զուտ վարկեր խոշոր ընկերություններին** | 17,714,710 | 528,233 | 89,887 | 18,332,830 |
| **Վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 1,776,456 | - | - | 1,776,456 |
| Արժեզրկված վարկեր | - | - | - | - |
| - ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | - | - |
| Ընդամենը արժեզրկված վարկեր | - | - | - | - |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (16,899) | - | - | (16,899) |
| **Ընդամենը զուտ վարկեր փոքր և միջին չափի ընկերություններին** | 1,759,557 | - | - | 1,759,557 |
| **Համախառն առևտրային վարկեր** | 19,681,072 | 609,159 | 817,160 | 21,107,391 |
| **Ընդամենը պարտքային կորստի գծով պահուստ առևտրային վարկերի համար** | (206,805) | (80,926) | (727,273) | (1,015,004) |
| **Ընդամենը զուտ առևտրային վարկեր** | 19,474,267 | 528,233 | 89,887 | 20,092,387 |
| | | | | |
| **Մանրածախ վարկեր** | | | | |
| **Հիփոթեքային վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 11,668,788 | - | - | 11,668,788 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 233,006 | - | 233,006 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 38,446 | - | - | 38,446 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 65,763 | - | 65,763 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 49,702 | 49,702 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 53,061 | 53,061 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 49,005 | 49,005 |
| | 11,707,234 | 298,769 | 151,768 | 12,157,771 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (16,205) | (24,874) | (15,588) | (56,667) |
| **Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր** | 11,691,029 | 273,895 | 136,180 | 12,101,104 |
| | | | | |
| **Անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 790,366 | - | - | 790,366 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 31,571 | - | 31,571 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 11,678 | 2,749 | - | 14,427 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 19,241 | - | 19,241 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 15,710 | 15,710 |
| - 181-270 օր ժամկետանց | - | - | 7,434 | 7,434 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 10,983 | 10,983 |
| | 802,044 | 53,561 | 34,127 | 889,732 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (1,273) | (2,476) | (2,137) | (5,886) |
| **Ընդամենը զուտ անշարժ գույքի գրավով սպառողական վարկեր** | 800,771 | 51,085 | 31,990 | 883,846 |
| | | | | |
| **Վարկային քարտեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 566,874 | - | - | 566,874 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 8,238 | - | 8,238 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 10,575 | - | - | 10,575 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 3,371 | - | 3,371 |
| | 577,449 | 11,609 | - | 589,058 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (5,955) | (1,142) | - | (7,097) |
| **Ընդամենը զուտ վարկային քարտեր** | 571,494 | 10,467 | - | 581,961 |
| | | | | |
| **Աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 314,218 | - | - | 314,218 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 8,371 | - | 8,371 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 3,955 | - | - | 3,955 |
| - 31-90 օր ժամկետանց | - | 1,064 | - | 1,064 |
| | 318,173 | 9,435 | - | 327,608 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (1,194) | (1,481) | - | (2,675) |

| | 31 դեկտեմբեր 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը վարկեր |
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Ընդամենը զուտ աշխատավարձով ապահովված սպառողական վարկեր** | 316,979 | 7,954 | - | 324,933 |
| **Ավտովարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 235,629 | - | - | 235,629 |
| - մինչև 30 օր ժամկետանց | 412 | - | - | 412 |
| - 91-180 օր ժամկետանց | - | - | 1,016 | 1,016 |
| - ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 1,412 | 1,412 |
| | 236,041 | - | 2,428 | 238,469 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (326) | - | (298) | (624) |
| **Ընդամենը զուտ ավտովարկեր** | 235,715 | - | 2,130 | 237,845 |
| **Անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 227,540 | - | - | 227,540 |
| - ոչ ժամկետանց Բանկում, սակայն 2-րդ փուլում | - | 8,299 | - | 8,299 |
| | 227,540 | 8,299 | - | 235,839 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | (1,001) | (377) | - | (1,378) |
| **Ընդամենը զուտ անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկեր** | 226,539 | 7,922 | - | 234,461 |
| **Այլ մանրածախ վարկեր** | | | | |
| - ոչ ժամկետանց | 61,185 | - | - | 61,185 |
| | 61,185 | - | - | 61,185 |
| **Պարտքային կորստի գծով պահուստ** | - | - | - | - |
| **Ընդամենը զուտ այլ մանրածախ վարկեր** | 61,185 | - | - | 61,185 |
| **Համախառն մանրածախ վարկեր** | 13,929,666 | 381,673 | 188,323 | 14,499,662 |
| **Ընդամենը պարտքային կորստի գծով պահուստ մանրածախ վարկերի համար** | (25,954) | (30,350) | (18,023) | (74,327) |
| **Ընդամենը զուտ մանրածախ վարկեր** | 13,903,712 | 351,323 | 170,300 | 14,425,335 |
| **Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր** | 33,377,979 | 879,556 | 260,187 | 34,517,722 |

## (բ) Գրավի վերլուծություն

### *(i) Առևտրային վարկեր*

Առևտրային վարկերը ենթակա են վարկունակության գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի առավել տեղին ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը տալիս է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն առևտրային վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

| **30 սեպտեմբերի 2020թ.** <br> **հազ. դրամ** | **Հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեք** | **Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար** | **Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար** |
|---|---|---|---|
| **Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր** | | | |
| Դրամական միջոցներ և ավանդներ | 153,621 | | 153,621 |
| Անշարժ գույք | 9,936,478 | - | 9,936,478 |
| Կորպորատիվ բաժնետոմսեր | 4,714,563 | | 4,714,563 |
| Առանց ապահովվածության | 5,254,692 | - | - |
| **Ընդամենը արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր** | **20,059,354** | **-** | **14,804,662** |
| **Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր** | | | |
| Անշարժ գույք | 670,383 | 670,383 | - |
| Այլ | 25,300 | 25,300 | - |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | **695,683** | **695,683** | **-** |
| **Ընդամենը առևտրային վարկեր** | **20,755,037** | **695,683** | **14,804,662** |

| **31 դեկտեմբերի 2019թ.** <br> **հազ. դրամ** | **Հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեք** | **Գրավի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար** | **Գրավի իրական արժեքը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի համար** |
|---|---|---|---|
| **Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր** | | | |
| Դրամական միջոցներ և ավանդներ | 141,121 | - | 141,121 |
| Անշարժ գույք | 12,824,749 | - | 12,824,749 |
| Կորպորատիվ բաժնետոմսեր | 5,892,336 | - | 5,892,336 |
| Առանց ապահովվածության | 616,061 | - | - |
| **Ընդամենը արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր** | **19,474,267** | **-** | **18,858,206** |
| **Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր** | | | |
| Անշարժ գույք | 597,920 | 597,920 | - |
| Այլ | 20,200 | 20,200 | - |
| Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր | **618,120** | **618,120** | **-** |
| **Ընդամենը առևտրային վարկեր** | **20,092,387** | **618,120** | **18,858,206** |

Վերը ներկայացված աղյուսակները չեն ներառում գրավի արժեքի՝ վարկի գումարին գերազանցող մասը:

Մի քանի տեսակի գրավով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել տեղին է արժեզրկման գնահատման համար: Անհատներից, օրինակ՝ ՓՄՁ վարկառուների բաժնետերերից ստացված երաշխավորությունները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների վարկեր:

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

## *(ii) Մանրածախ վարկեր*

Հիփոթեքային վարկերը և անշարժ գույքի գրավով սպառողական վարկերն ապահովված են վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքով: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը և անշարժ գույքի գրավով սպառողական վարկերը տրամադրվում են, երբ վարկ/գրավի արժեք հարաբերակցությունը վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ չի գերազանցում համապատասխանաբար 70%-ը և 50%-ը: Անհատ ձեռնարկատերերին և այլ փոքր բիզնեսներին տրված վարկերն ապահովված են անշարժ գույքով: Ավտովարկերն ապահովված են վարկի առարկա հանդիսացող ավտոմեքենայով: Աշխատավարձով ապահովված սպառողական վարկերի և վարկային քարտերի համար ապահովվածություն է ծառայում աշխատավարձը:

## *(i) Առգրավված գրավ*

2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում Բանկը ձեռք է բերել 96,321 դրամ զուտ հաշվեկշռային արժեքով ակտիվներ՝ հաճախորդներին տրված վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով (2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում՝ 58,819 հազար դրամ): Առգրավված գրավի 47,248 հազար դրամ գումարով մասը վաճառվել է 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում (2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում՝ 165,873 հազար դրամ գումարով մասը վաճառվել էր/կամ փոխանցվել էր հիմնական միջոցների կազմ):

2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առգրավված գրավը ներառում է.

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Անշարժ գույք | 881,660 | 832,586 |
| **Ընդամենը առգրավված գրավ** | **881,660** | **832,586** |

Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները հնարավորինս սեղմ ժամկետներում:

## (գ) Գրավադրված ակտիվներ

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 2,855,907 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,354,696 հազար դրամ) ծառայում են որպես գրավ բանկերի մնացորդների և ավանդների և այլ ներգրավված միջոցների համար:

## (դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ֆինանսական և այլ ծառայություններ | 5,353,955 | 6,791,454 |
| Էլեկտրաէներգիա և գազ | 4,886,026 | - |
| Գյուղատնտեսական արտադրանքի մշակում | 4,156,678 | 4,234,178 |
| Անշարժ գույք | 3,255,665 | 3,372,497 |
| Շինարարություն | 2,188,432 | 4,262,615 |
| Առևտուր | 1,266,430 | 1,463,679 |
| Արդյունաբերություն | 140,684 | 982,968 |
| Մանրածախ վարկեր | 17,096,691 | 14,499,662 |
| | **38,344,561** | **35,607,053** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (676,954) | (1,089,331) |
| | **37,667,607** | **34,517,722** |

## (ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի երկու վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք), որոնց տրամադրված վարկերի զուտ մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս վարկերի հաշվեկշռային արժեքը կազմում է 9,575,391 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,984,642 հազար դրամ):

## (զ) Վարկերի մարման ժամկետներ

Վարկային պորտֆելի մարման ժամկետների վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ի (դ) կետում, որն արտացոլում է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի՝ պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

# 13 Ներդրումային արժեթղթեր

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 27,084,580 | 31,836,609 |
| - Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր | - | 891,373 |
| - 5 խոշորագույն հայկական բանկերի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր | 2,685,195 | 1,832,488 |
| - Այլ հայկական ֆինանսական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր | 429,970 | 407,658 |
| | 30,199,745 | 34,968,128 |
| **Բաժնային գործիքներ** | | |
| - Կորպորատիվ բաժնետոմսեր | 17,517 | 13,160 |
| | 30,217,262 | 34,981,288 |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (116,268) | (116,701) |
| **Հաշվեկշռային արժեք – իրական արժեք** | 30,217,262 | 34,981,288 |

Ներդրումային արժեթղթերը ժամկետանց չեն:

# 14 Վարձակալություն

Բանկը չենք է վաձակալում 10 տարի ժամկետով՝ առանց ժամկետի ավարտին վարձակալությունը նորացնելու հնարավորության: Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ:

## (ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված են վարձակալված անշարժ գույքին վերաբերող օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որոնք չեն համապատասխանում ներդրումային գույքի սահմանմանը:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ | |
|---|---|---|---|---|
| | Հող և շենքեր հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ | Հող և շենքեր հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
| Մնացորդը առ 1 հունվարի | 491,361 | **491,361** | - | - |
| Մաշվածության գումար | (40,166) | **(40,166)** | (9,013) | **(9,013)** |
| Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին | 203,859 | **203,859** | 500,374 | **500,374** |
| **Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ** | **655,054** | **655,054** | **491,361** | **491,361** |

## (բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Վարձակալության գծով պարտավորության դիմաց տոկոսներ | **(12,281)** | **(36,976)** | - | - |

## (գ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Վճարված վարձավճարներ | **(17,493)** | **(52,479)** | - | - |

# 15 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Հող և շենքեր | Համակարգիչն. և կապի սարքավորումն. | Գույք | Փոխադրա-միջոցն. | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | 1,427,126 | 340,776 | 272,764 | 41,311 | 201,116 | 2,283,093 |
| Ավելացումներ | 116,683 | 73,751 | 87,566 | - | 670 | 278,670 |
| Օտարումներ | - | - | | - | - | - |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2020թ.** | **1,543,809** | **414,527** | **360,330** | **41,311** | **201,786** | **2,561,763** |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2020թ. | (242,146) | (277,148) | (238,037) | (16,790) | (97,835) | (871,956) |
| Հաշվետու ժամանակաշրջանի մաշվածություն և ամորտիզացիա | (14,396) | (27,594) | (14,475) | (5,014) | (1,979) | (63,458) |
| Օտարումներ | - | - | | - | - | - |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2020թ.** | **(256,542)** | **(304,742)** | **(252,512)** | **(21,804)** | **(99,814)** | **(935,414)** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | |
| **Առ 30 սեպտեմբերի 2020թ.** | **1,287,267** | **109,785** | **107,818** | **19,507** | **101,972** | **1,626,349** |
| **Սկզբնական արժեք** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 1,405,293 | 306,484 | 265,627 | 44,265 | 165,871 | 2,187,540 |
| Ավելացումներ | 21,833 | 43,879 | 12,403 | 10,512 | 35,245 | 123,872 |
| Օտարումներ | - | (9,587) | (5,266) | (13,466) | - | (28,319) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **1,427,126** | **340,776** | **272,764** | **41,311** | **201,116** | **2,283,093** |
| **Մաշվածություն և ամորտիզացիա** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | (222,951) | (261,269) | (224,642) | (24,315) | (97,103) | (830,280) |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | (19,195) | (25,045) | (18,407) | (5,941) | (732) | (69,320) |
| Օտարումներ | - | 9,166 | 5,012 | 13,466 | - | 27,644 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **(242,146)** | **(277,148)** | **(238,037)** | **(16,790)** | **(97,835)** | **(871,956)** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **1,184,980** | **63,628** | **34,727** | **24,521** | **103,281** | **1,411,137** |

2020թ. առաջին ինն ամիսների ընթացքում չեն եղել հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ շինարարությանը վերաբերող կապիտալացված փոխառության ծախսումներ (2019թ-ին նման ծախսումներ չեն եղել):

# 16 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | | |
| - Անհատներ | 7,423,963 | 13,874,002 |
| - Իրավաբանական անձինք | 2,619,190 | 1,490,969 |
| Ժամկետային ավանդներ | | |
| - Անհատներ | 36,394,599 | 39,837,356 |
| - Իրավաբանական անձինք | 13,035,182 | 12,969,685 |
| | **59,472,934** | **68,172,012** |

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների 1,419,990 հազար դրամ գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառության հանձնառությունների համար (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 428,787 հազար դրամ):

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի մեկ հաճախորդ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չորս հաճախորդ), որի միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 3,825,390 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,489,629 հազար դրամ):

# 17 Այլ ներգրավված միջոցներ

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Փոխառություն կապակցված կողմից | 3,030,683 | 3,038,930 |
| Վարկեր Ազգային հիփոթեքային ընկերությունից | 545,882 | 634,241 |
| Այլ | 104,399 | 84,253 |
| | **3,680,964** | **3,757,424** |

## (ա) Փոխարկելի փոխառություն

2017թ. հունվարի 19-ին Բանկը ստացել է 6,200 հազար ԱՄՆ դոլար գումարով փոխառություն կապակցված կողմից, որը փոխարկելի է Բանկի սովորական բաժնետոմսերի մեկ բաժնետոմսի անվանական արժեքով 4 տարվա ընթացքում: Փոխառությունը ներառում է պարտադիր փոխարկմանը վերաբերող դրույթ, որն իրենից ներկայացնում է ֆորվարդային ֆինանսական գործիք: Ղեկավարությունը գտնում է, որ այս գործիքի իրական արժեքն էական չէ 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

# 18 Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից

2015թ. ապրիլի 30-ին, 2016թ. սեպտեմբերի 30-ին և 2016թ. դեկտեմբերի 13-ին Բանկը ստացել է 5,000 հազար ԱՄՆ դոլար, 9,375 հազար եվրո և 5,200 հազար ԱՄՆ դոլար գումարներով ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից, որոնք փոխարկելի են Բանկի սովորական բաժնետոմսերի մեկ բաժնետոմսի անվանական արժեքով 10 տարվա ընթացքում՝ բաժնետիրոջ ընտրությամբ: Վարկերն ունեն պարտադիր, կամավոր և արագացված փոխարկման հնարավորություններ, որոնք իրենցից ներկայացնում են համապատասխանաբար ֆորվարդներ և օպցիոններ են:

2015թ. ապրիլի 30-ին տրված ստորադաս փոխառությունը Բանկը փոխարկել էր բաժնետոմսերի՝ օգտվելով արագացված փոխարկման հնարավորությունից (տես՝ Ծանոթագրություն 19 (ա)):

Ղեկավարությունը գտնում է, որ այս գործիքների իրական արժեքներն էական չեն 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

# 19 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

## (ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 262,491 սովորական բաժնետոմսից (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 262,491 բաժնետոմսից): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100,000 դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

## (բ) Պահուստների բնույթը և նպատակը

### Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ

Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

## (գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

# 20 Ռիսկերի կառավարում

## (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և կազմում է Բանկի գործառնությունների կենսական տարրը: Ֆինանսական, շուկայական, պարտքային, իրացվելիության և գործառնական ռիսկերն այն հիմնական (նշանակալի) ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան/փորձն արտացոլելու նպատակով: Բանկը մշակել է նշանակալի ռիսկերի և կապիտալի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար: Վարչությունը՝ Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) առաջկցությամբ պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Կառավարման հանձնաժողովը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության համապատասխան ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:
Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Կառավարման հանձնաժողովը և ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Բանկի նշանակալի ռիսկերի կառավարմանն անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

## (բ) Ֆինանսական ռիսկերի ուսումնասիրություն

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսական ռիսկերին Բանկի ենթարկվածության վերաբերյալ:

### Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար):

Առևտրային վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից, որը պատասխանատու է առևտրային վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Կառավարման հանձնաժողովը ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության կողմից ներկայացված

նյութերի հիման վրա: Նախքան Կառավարման հանձնաժողովի վերջնական հաստատումը, առանձին գործարքները ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է անկախ գնահատող ընկերությունների կամ Բանկի մասնագետների կողմից:

Մանրածախ վարկերի դիմումները ուսումնասիրվում են Մանրածախ վարկերի հաստատման բաժնի, Մանրածախ վարկերի հաստատման կոմիտեի և Կառավարման հանձնաժողովի կողմից՝ ելնելով հաստատման սահմանաչափերից: Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ամբողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

**Պարտքային ռիսկ – ակնկալվող պարտքային կորուստների գումարները**

**Արժեզրկման գնահատման համար օգտագործվող ելակետային տվյալներ, ենթադրություններ և մեթոդներ**

Տես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

*Պարտքային ռիսկի նշանակալի աճ*

Որոշելու համար, արդյոք ֆինանսական գործիքի գծով պարտազանցման ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը դիտարկում է ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձի, վարկային որակի փորձագետների գնահատման և ապագայամետ տեղեկատվության վրա հիմնված վերլուծությունը:

Գնահատման նպատակն է պարզել, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ՝ համեմատելով հետևյալ ցուցանիշները.

- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,
- պարտազանցման հավանականությունն ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում ժամանակի տվյալ պահի համար, որը գնահատվել է պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի սկզբնական ճանաչման պահին (ճշգրտված վաղաժամ մարումների ակնկալիքների փոփոխությունների մասով՝ կիրառելի լինելու դեպքում):

Բանկն օգտագործում է երեք չափանիշ, որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ.

- քանակական թեստ՝ հիմք ընդունելով պարտազանցման հավանականության փոփոխությունները,
- որակական ցուցանիշներ և
- ժամկետանցության 30-օրյա սահմանափակիչ:

*Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակներ*

Բանկը պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ տարբեր տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են պարտազանցման ռիսկը կանխատեսելու համար, և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտազանցման ռիսկի մասին: Այս գործոնները տարբեր են՝ կախված պարտքային ռիսկին ենթարկվող գործիքի բնույթից և փոխառուի տեսակից:

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակներն այնպես են սահմանվում և կարգաբերվում, որ պարտազանցման ռիսկն աճում է էքսպոնենցիոնալ ձևով պարտքային ռիսկի վատթարացմանը զուգընթաց, օրինակ՝ պարտքային ռիսկի 1-ին և 2-րդ վարկանշավորման մակարդակների պարտազանցման ռիսկերի միջև տարբերությունն ավելի փոքր է քան 2-րդ և 3-րդ մակարդակների միջև տարբերությունը:

Պարտքային ռիսկին ենթարկվող յուրաքանչյուր գործիք ստանում է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ սկզբնական ճանաչման պահին՝ փոխառուի վերաբերյալ առկա տեղեկատվության հիման վրա: Պարտքային ռիսկին ենթարկվող գործիքները կանոնավոր կերպով հսկվում են, որի արդյունքում գործիքի պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակը կարող է փոփոխվել: Հսկողության համար որպես կանոն օգտագործվում է հետևյալ տեղեկատվությունը.

| **Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (առևտրային վարկեր)** | **Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (առևտրային և մանրածախ վարկեր)** |
|---|---|
| • Հաճախորդի փաստաթղթերի, օրինակ՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների, կառավարչական հաշվետվությունների, բյուջեների և կանխատեսումների պարբերական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը: Ցուցանիշները, որոնց հատուկ ուշադրություն է դարձվում, ներառում են՝ համախառն շահույթը, ֆինանսական լծակավորման ցուցանիշը, պարտքի սպասարկման գործակիցը, համապատասխանությունը կովենանտներին, կառավարման որակը, վերադաս ղեկավար անձնակազմի փոփոխությունները: | • Վճարումների մասին տեղեկատվությունը, ներառյալ ժամկետանցության կարգավիճակի, մարումների փոփոխականության մասին տեղեկատվությունը: |
| • Վարկանիշային գործակալությունների, մամուլի հոդվածների տվյալները, արտաքին վարկանիշների փոփոխությունների մասին տեղեկատվությունը | • Տրամադրված սահմանաչափի օգտագործումը<br>• Վարկային պայմանագրի պայմանների վերանայման դիմումը և դիմումի բավարարումը |
| • Պարտատոմսերի գնանշվաշ գները և պարտքի պարտազանցման սվոփերի գները փոխառուի համար՝ առկայության դեպքում | • Առևտրային, ֆինանսական և տնտեսական պայմանների առկա և կանխատեսվող փոփոխությունները |

| Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (առևտրային վարկեր) | Ենթարկվածությունը պարտքային ռիսկին (առևտրային և մանրածախ վարկեր) |
|---|---|
| • Փոխառուի քաղաքական, օրենսդրական և տեխնոլոգիական միջավայրի կամ նրա գործունեության փաստացի և ակնկալվող նշանակալի փոփոխությունները | |

*Պարտազանցության հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում*

Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ իրավաբանական անձանց համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս: Բանկը հավաքում է պարտքային ռիսկին ենթարկվող իր ֆինանսական գործիքների կատարողականի և պարտազանցման վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվում է ըստ արտադրանքի/ծառայության և փոխառուի տեսակի, ինչպես նաև ըստ պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակի: Որոշ պորտֆելների համար օգտագործվում է նաև արտաքին վարկանիշային գործակալություններից ձեռք բերված տեղեկատվությունը: Բանկը սահմանում է պարտազանցման հավանականության առավելագույն չափը, որը հավասար է այն երկրի պարտազանցման հավանականության վարկանիշին, որտեղ իր գործունեությունն է իրականացնում փոխառուն:

Ժամկետանց օրերն օգտագործվում են որպես հիմնական ելակետային տվյալներ անհատների համար պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների գծով պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքը ստեղծելիս միգրացիայի մատրիցների Մարկովի մոդելում: Միգրացիայի մատրիցները կառուցվում են նախորդ 48 ամիսների տվյալների հիման վրա:

*Պարտքային ռիսկի նշանակալի աճի որոշում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Պարտքային ռիսկի աճի նշանակալի լինելը որոշելիս դիտարկվում են ֆինանսական գործիքի և փոխառուի բնութագրերը և աշխարհագրական տարածաշրջանը: Նշանակալիության չափանիշները տարբեր են փոխատվության տարբեր տեսակների, մասնավորապես, իրավաբանական անձանց և անհատների տրվող փոխատվությունների համար:

Սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի աճը կարող է համարվել նշանակալի նաև այն դեպքերում, երբ դրա այդ մասին են վկայում Բանկի պարտքային ռիսկի կառավարման գործընթացների հետ կապված որակական ցուցանիշները, որոնք այլ պարագայում կարող են ժամանակին ամբողջական առումով չարտացոլվել քանակական վերլուծության շրջանակում: Սա վերաբերում է պարտքային ռիսկին ենթարկվող այն գործիքներին, որոնք բավարարում են բարձրացված ռիսկի որոշ չափանիշներին, որոնցից է հատուկ ուշադրության ցանկում ներառվելը: Նման որակական գործոնները հիմնված են փորձագետների դատողությունների և անցյալ ժամանակաշրջանների համապատասխան փորձի վրա:

Բանկը պարտքային ռիսկի նշանակալի աճի մասին վկայող սահմանափակիչ է համարում ակտիվի ավելի քան 30 օր ժամկետանցությունը: Ժամկետանց օր»րի քանակը որոշվում է հաշվելով օրերն այն առաջին օրվանից, երբ վճարումն ամբողջությամբ չի ստացվել: Վճարում

կատարելու ամսաթվերը որոշվում են առանց հաշվի առնելու արտոնյալ ժամանակահատվածը, որը կարող է տրամադրվել փոխառուին:

Եթե գոյություն ունի վկայություն, որ այլևս չկա պարտքային ռիսկի նշանակալի աճ ի համեմատություն սկզբնական ճանաչման, գործիքի գծով կորստի պահուստը կրկին չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների չափով: Պարտքային ռիսկի աճի որոշ որակական ցուցանիշներ, այդ թվում՝ վերանայված պայմանների խախտումը, կարող են վկայել պարտազանցման ռիսկի աճի մասին, որը պահպանվում է, նույնիսկ երբ ցուցանիշն ինքնին դադարում է գոյություն ունենալ: Նման դեպքերում Բանկը սահմանում է փորձաշրջան, որի ընթացքում ֆինանսական ակտիվի գծով վճարումները պետք է կատարվեն ժամանակին և սահմանված չափով՝ ապացուցելու համար, որ պարտքային ռիսկը նշանակալիորեն նվազել է:

Վարկի պայմանագրային պայմանների փոփոխության դեպքում ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչման չափանիշների այլևս բավարարված չլինելու ապացույց կարող է հանդիսանալ արդիական տեղեկատվությունը, որ առկա է վճարումները ժամանակին կատարելու պատմություն՝ փոփոխված պայմանագրային պայմաններին համապատասխան:

*Պարտազանցության սահմանում*

Բանկը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի Բանկի նկատմամբ ստանձնած իր վարկային պարտավորությունները, եթե Բանկը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (առկայության դեպքում),
- Բանկի նկատմամբ փոխառուի նշանակալի վարկային պարտավորություններից որևէ մեկն ավելի քան 90 օր ժամկետանց է: Օվերդրաֆտները ժամկետանց են համարվում այն օրվանից, երբ հաճախորդը խախտում է սահմանված սահմանաչափը կամ երբ հաճախորդին առաջարկվում է այնպիսի սահմանաչափ, որը ցածր է ընթացիկ չմարված գումարից, կամ
- հավանական է դառնում, որ ակտիվի պայմանները կվերանայվեն փոխառուի սնանկության արդյունքում՝ վարկային պարտավորությունները կատարելու փոխառուի անկարողության պատճառով:

Փոխառուի հետ կապված պարտազանցման տեղի ունենալը գնահատելիս՝ Բանկը դիտարկում է հետևյալը՝

- որակական ցուցանիշները, օրինակ՝ կովենանտների խախտումը,
- քանակական ցուցանիշները, օրինակ՝ նույն թողարկողի կողմից Բանկի նկատմամբ այլ պարտավորության ժամկետանց կարգավիճակը և չկատարումը և
- Բանկի ներսում մշակված և արտաքին աղբյուրներից ստացված տվյալները:

Ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են ֆինանսական գործիքի գծով պարտազանցման տեղի ունենալը գնահատելու համար, և դրանց նշանակալիությունը կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հանգամանքների փոփոխություններն արտացոլելու համար:

*Ապագայամետ տեղեկատվության ներառում*

Բանկը ներառում է ապագայամետ տեղեկատվությունը, երբ գնահատում է, արդյոք տեղի է ունեցել գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ չափում է ակնկալվող պարտքային կորուստները: Ապագայամետ տեղեկատվությունը գնահատելիս Բանկն օգտագործում է փորձագետների դատողությունները:

Բանկը նույնականացրել և փաստաթղթավորել է պարտքային ռիսկի և պարտքային կորուստների առանցքային գործոնները ֆինանսական գործիքների յուրաքանչյուր պորտֆելի համար և, օգտագործելով անցյալ ժամանակաշրջանների տվյալների վերլուծությունը, գնահատել է մակրոտնտեսական փոփոխականի, պարտքային ռիսկի և պարտքային կորուստների միջև փոխհարաբերությունները: Առանցքային գործոններն են ՀՆԱ-ի կանխատեսումները, արտարժույթի փոխարժեքի և անշարժ գույքի շուկայում գների փոփոխությունները:

*Փոփոխված ֆինանսական ակտիվներ*

Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներից ելնելով, ներառյալ շուկայական պայմանների փոփոխությունը, հաճախորդների պահպանումը և այլ գործոնները, որոնք կապված չեն հաճախորդի վճարունակության ներկայիս կամ հնարավոր վատթարացման հետ: Գոյություն ունեցող վարկը, որի պայմանները փոփոխվել են, կարող է ապաճանաչվել, և վերաբանակցված վարկը կարող է ճանաչվել որպես նոր վարկ իրական արժեքով՝ Ծանոթագրություն 4 (ե) (iii) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, և փոփոխությունը չի հանգեցնում ապաճանաչման, որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, համեմատվում են՝

- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով փոփոխված պայմաններից,
- պարտազանցման հավանականությունը ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, որը գնահատվում է սկզբնական ճանաչման պահին առկա տվյալների և սկզբնական պայմանագրային պայմանների հիման վրա:

Եթե փոփոխությունը հանգեցնում է ապաճանաչման, ճանաչվում է նոր վարկ և դասվում 1-ին փուլին (ենթադրելով, որ այն պարտքային առումով արժեզրկված չէ այդ պահին):

Բանկը վերաբանակցում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկերի պայմանները (վարկային պայմանագրի պայմանների վերանայում)՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել պարտքի վերադարձման հնարավորությունները և նվազագույնի հասցնել պարտազանցման ռիսկը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության համաձայն՝ վարկի պայմանները վերնայավում են ընտրանքային կարգով, եթե փոխառուն ներկա պահին չի կատարել պարտքի գծով իր պարտականությունները կամ գոյություն ունի պարտազանցման մեծ ռիսկ, եթե գոյություն ունի վկայություն, որ փոխառուն ձեռնարկել է բոլոր ողջամիտ քայլերը մարումները սկզբնական պայմանագրային պայմանների համաձայն կատարելու համար և ակնկալվում է, որ կկարողանա կատարել իր պարտականությունները վերանայված պայմաններով:

Պայմանների վերանայումը սովորաբար ներառում է մարման ժամկետի երկարաձգումը, տոկոսների վճարման ժամկետների փոփոխությունը և կովենանտների պայմանների փոփոխությունը: Վարկային պայմանագրի պայմանների վերանայման քաղաքականությունը գործում է թե՛ անհատներին և թե՛ իրավաբանական անձանց տրված վարկերի համար:

Վարկային պայմանագրի պայմանների վերանայման Բանկի քաղաքականության շրջանակում փոփոխված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման հավանակության գնահատումն արտացոլում է այն հանգամանքը, արդյոք փոփոխությունը բարելավել է կամ վերականգնել է տոկոսները և մայր գումարը հավաքագրելու Բանկի կարողությունը, ինչպես նաև վարկային պայմանագրերի պայմանների նման վերանայումների Բանկի անցյալ ժամանակաշրջանների փորձը: Այս գործընթացի շրջանակում Բանկը

գնահատում է փոխառուի կողմից մարումները ժամանակին կատարելու հնարավորությունը պայմանագրի պայմանների փոփոխության դեպքում և դիատրկում է տարբեր վարքագծային ցուցանիշներ:

Ընդհանուր առմամբ, վարկային պայմանագրի պայմանների վերանայումն իրենից ներկայացնում է պարտքային ռիսկի նշանակալի աճի որակական ցուցանիշ, և պայմանների վերանայման ակնկալիքը կարող է հանդես գալ որպես պարտքային առումով արժեզրկման վկայություն (տես՝ Ծանոթագրություն 4 (ե) (iv)): Անհրաժեշտ է, որ հաճախորդը հետևողականորեն ցուցաղրի պարտաճանաչ վճարման վարքագիծ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, մինչև որ վարկն այլևս չհամարվի պարտքային առումով արժեզրկված/վարկի հետ կապված այլևս չարձանագրվի պարտազանցում, կամ մինչև որ չհամարվի, որ պարտազանցման հավանակությունն այնքան է նվազել, որ կորստի պահուստը կարող է կրկին չափվել 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

*Ակնկալվող պարտքային կորուստների չափում*

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս որպես առանցքային ելակետային տվյալներ հանդես են գալիս հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքները.

- պարտազանցման հավանականությունը,
- կորուստը պարտազանցման դեպքում,
- պարտքի գումարը պարտազանցման պահին:

1-ին փուլի գործիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով 12-ամսյա պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են բազմապատկելով ամբողջ ժամկետի համար պարտազանցման հավանականությունը պարտազանցման դեպքում առաջացող կորստի գումարով և պարտքի գումարով պարտազանցման պահին:

Պարտազանցման հավանականության գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է վերը՝ «Պարտազանցման հավանականության ժամկետային կառուցվածքի ստեղծում» բաժնում:

Բանկը պարտազանցման դեպքում առաջացող կորուստը գնահատում է հիմք ընդունելով պարտականությունները չկատարած պայմանագրային կողմերին ներկայացված պահանջների արդյունքում միջոցների վերադարձման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատման մոդելներում դիտարկվում են պահանջի կառուցվածքը, գրավը, առաջնահերթությունը, պայմանագրային կողմի գործունեության ոլորտը, ֆինանսական ակտիվի անբաժանելի մասը կազմող ցանկացած գրավի փոխհատուցման ծախսումները: Անշարժ գույքով ապահովված վարկերի համար վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությունն առանցքային ցուցանիշ է պարտազանցման դեպքում առաջացող կորուստը որոշելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատականները ճշգրտվում են տարբեր տնտեսական սցենարների տեսանկյունից և անշարժ գույքով ապահոված վարկերի հետ կապված՝ անշարժ գույքի գների հնարավոր փոփոխություններն արտացոլելու համար: Պարտազանցման դեպքում առաջացող կորուստը հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիմունքով՝ որպես զեղչման գործակից կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է պարտքի ակնկալվող գումարը պարտազանցման դեպքում: Բանկը պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկում է հիմք ընդունելով պայմանագրային կողմի պարտքի ընթացիկ գումարը և

պայմանագրով թույլատրվող և մաշվածության արդյունքում այդ գումարի հնարավոր փոփոխությունները: Ֆինանսական ակտիվի համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վերջինիս համախառն հաշվեկշռային արժեքը պարտազանցման պահին: Փոխատվության հանձնառությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է հնարավոր ապագա գումարները, որոնք կարող են օգտագործվել պայմանագրի շրջանակում, որոնք գնահատվում են անցյալ ժամանակաշրջանների դիտարկումների և ապագայամետ տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական երաշխավորությունների համար պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է վճարման ենթակա գումարը ֆինանսական երաշխավորության կատարման պահին:

Ինչպես նշված է վերը և պայմանով, որ 1-ին փուլի ֆինանսական ակտիվների համար առավելագույնս կօգտագործվի պարտազանցման հավանականության 12-ամսյա ցուցանիշը, Բանկը ակնկալվող պարտքային կորուստները չափում է հաշվի առնելով պարտազանցման ռիսկն այն առավելագույն պայմանագրային ժամանակահատվածում (ներառյալ փոխառուի երկարաձգման բոլոր հնարավորությունները), որի ընթացքում այն ենթարկվում է պարտքային ռիսկին, եթե նույնիսկ Բանկը դիտարկում է ավելի երկար ժամանակահատված պարտքային ռիսկի կառավարման նպատակների համար: Առավելագույն պայմանագրային ժամանակահատվածը տևում է մինչև այն ամսաթիվը, երբ Բանկն իրավունք ունի պահանջել փոխատվության մարումը կամ դադարեցնել փոխատվության հանձնառությունը կամ երաշխավորությունը:

Եթե ցուցանիշի մոդելավորումն իրականացվում է խմբային հիմունքով, ֆինանսական գործիքները խմբավորվում են ըստ ռիսկի ընդհանրական բնութագրերի, որոնք ներառում են՝

- գործիքի տեսակը,
- գրավի տեսակը:

Խմբավորումները պետք է կանոնավոր հիմունքով վերանայվեն՝ առանձին խմբերի շրջանակում պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքների միատեսակ լինելն ապահովելու համար:

Այն պորտֆելների համար, որոնց վերաբերյալ Բանկն ունի անցյալ ժամանակաշրջանների սահմանափակ տվյալներ, ներքին աղբյուրներից հասանելի տեղեկատվությունը լրացնելու համար օգտագործվում է արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունը: Ստորև ներկայացված են այն պորտֆելները, որոնց համար արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվությունն օգտագործվել է որպես նշանակալի ելակետային տվյալ ակնկալվող պարտքային կորուստները չափելիս:

| **2020թ. սեպտեմբերի 30-ի** | | **Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն** | |
|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **Ենթարկվածություն պարտքային ռիսկին** | **Պարտազանցման հավանականություն** | **Կորուստը պարտազանցման դեպքում** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր | 30,199,745 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | «Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն |
| Իրավաբանական անձանց տրված վարկեր | 5,092,028 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | «Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն |
| Իրավաբանական անձանց տրված վարկեր | 15,663,009 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | - |

| 2019թ. դեկտեմբերի 31-ի<br>հազ. դրամ | Ենթարկվածություն պարտքային ռիսկին | Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն: Պարտազանցման հավանականություն | Օգտագործված արտաքին աղբյուրներից ստացված ուղենիշային տեղեկատվություն: Կորուստը պարտազանցման դեպքում |
|---|---|---|---|
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր | 34,968,128 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | «Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն |
| Իրավաբանական անձանց տրված վարկեր | 473,487 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | «Moody» գործակալության պարտքի վերադարձի վերլուծության հաշվետվություն |
| Իրավաբանական անձանց տրված վարկեր | 19,618,900 | «S&P» գործակալության պարտազանցման վերլուծության հաշվետվություն | - |

## Կորստի պահուստ

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է ակնկալվող վարկային կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ.<br>1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (1,320) | - | - | (1,320) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 1,320 | - | - | 1,320 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (1,121) | - | - | (1,121) |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **(1,121)** | **-** | **-** | **(1,121)** |

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ.<br>1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (56,088) | - | - | (56,088) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 2,561 | - | - | 2,561 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (3,805) | - | - | (3,805) |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **(57,332)** | **-** | **-** | **(57,332)** |

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ. 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (206,805) | (80,926) | (727,273) | (1,015,004) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | 2,862 | (2,862) | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | 80,926 | (80,926) | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 39,947 | (44,759) | (108,088) | (112,900) |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (49,588) | (5,056) | - | (54,644) |
| Դուրսգրումներ* | - | - | 689,715 | 689,715 |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **(213,584)** | **(52,677)** | **(226,572)** | **(492,833)** |

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ. 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (25,954) | (30,350) | (18,023) | (74,327) |
| Փոխանցում 1-ին փուլ | (1,043) | 803 | 240 | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | 1,612 | (1,933) | 321 | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | 231 | 5,712 | (5,943) | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | (12,503) | (84,104) | (19,323) | (115,930) |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (10,681) | (7,975) | (311) | (18,967) |
| Դուրսգրումներ* | 3,674 | 6,607 | 14,822 | 25,103 |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **(44,664)** | **(111,240)** | **(28,217)** | **(184,121)** |

* Նախորդ տարվա դուրսգրումների տվյալը չի ներառում ժամանակաշրջանի վերականգնումները:

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ. 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (116,701) | - | - | (116,701) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 21,511 | - | - | 21,511 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (21,078) | - | - | (21,078) |
| Այլ | - | - | - | - |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **(116,268)** | **-** | **-** | **(116,268)** |

Վերը ներկայացված կորստի պահուստը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումն ըստ ֆինանսական գործիքների դասերի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (144) | - | - | (144) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 144 | - | - | 144 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (1,320) | - | - | (1,320) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(1,320)** | **-** | **-** | **(1,320)** |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (2,377) | - | - | (2,377) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | (49,196) | - | - | (49,196) |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (4,515) | - | - | (4,515) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(56,088)** | **-** | **-** | **(56,088)** |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (335,953) | - | (3,898,487) | (4,234,440) |
| Փոխանցում 1-ին փուլ | 12,459 | - | | 12,459 |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | (12,459) | - | (12,459) |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 230,398 | (29,195) | (100,960) | 100,243 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (113,709) | (39,272) | - | (152,981) |
| Դուրսգրումներ* | - | - | 3,272,174 | 3,272,174 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(206,805)** | **(80,926)** | **(727,273)** | **(1,015,004)** |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (47,763) | (73,246) | (47,082) | (168,091) |
| Փոխանցում 1-ին փուլ | (14,040) | 11,899 | 2,141 | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | 390 | (1,157) | 767 | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | 240 | 11,674 | (11,914) | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 37,389 | 25,654 | (11,393) | 51,650 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (7,542) | (6,635) | - | (14,177) |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| Դուրսգրումներ* | 5,372 | 1,461 | 49,458 | 56,291 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(25,954)** | **(30,350)** | **(18,023)** | **(74,327)** |

* Նախորդ տարվա դուրսգրումների տվյալը չի ներառում ժամանակաշրջանի վերականգնումները:

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (174,203) | - | - | (174,203) |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 83,404 | - | - | 83,404 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (25,902) | - | - | (25,902) |
| Այլ | - | - | - | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(116,701)** | **-** | **-** | **(116,701)** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է հետևյալ երկու մեծությունների համադրումը.

- վերը աղյուսակներում կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդներն ըստ ֆինանսական գործիքների դասերի և
- «պարտքային ֆինանսանական ակտիվների արժեզրկումից կորուստներ» և «փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների արժեզրկումից կորուստներ» հոդվածները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Ստորև ներկայացված է համադրումը 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| **հազ. դրամ** | **Դրամական միջոցներ և դրանց համար-ժեքներ** | **Ամորտի-զացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր** | **Ամորտիզաց-ված արժեքով չափվող հաճախորդների ն տրված վարկեր – իրավաբանակա ն անձիք** | **Ամորտիզաց-ված արժեքով չափվող հաճախորդ-ներին տրված վարկեր – անհատներ** | **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր** | **Այլ ակտիվներ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 1,320 | 2,561 | (112,900) | (115,930) | 21,511 | | (203,438) |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (1,121) | (3,805) | (54,644) | (18,967) | (21,079) | - | (99,616) |
| **Հանրագումար** | **199** | **(1,244)** | **(167,544)** | **(134,897)** | **432** | **-** | **(303,054)** |
| Նախկինում դուրսգրված գումարների վերականգնում | - | - | 8,545 | 73,332 | - | 29,264 | 111,141 |
| **Ընդամենը** | **199** | **(1,244)** | **(158,999)** | **(61,565)** | **432** | **29,264** | **(191,913)** |

Ստորև ներկայացված է համադրումը 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| հազ. դրամ | Դրամական միջոցներ և դրանց համար-ժեքներ | Ամորտի-զացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր | Ամորտիզաց-ված արժեքով չափվող հաճախորդների ն տրված վարկեր – իրավաբանակա ն անձիք | Ամորտիզաց-ված արժեքով չափվող հաճախորդ-ներին տրված վարկեր – անհատներ | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր | Այլ ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 144 | (48,787) | 209,857 | 18,151 | 80,494 | (6,786) | 253,073 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (906) | (3,467) | (29,778) | (17,400) | (23,325) | - | (74,876) |
| **Հանրագումար** | **(762)** | **(52,254)** | **180,079** | **751** | **57,169** | **(6,786)** | **178,197** |
| Նախկինում դուրսգրված գումարների վերականգնում | | | - | 57,309 | | | 57,309 |
| **Ընդամենը** | **(762)** | **(52,254)** | **180,079** | **58,060** | **57,169** | **(6,786)** | **235,506** |

Ստորև ներկայացված են անհատներին և իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելների համախառն հաշվեկշռային արժեքների նշանակալի փոփոխությունները 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների ընթացքում, որոնք հանգեցրել են կորստի պահուստի փոփոխություններին:

| | **30 սեպտեմբերի 2020թ.** | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 19,681,072 | 609,159 | 817,160 | 21,107,391 |
| Փոխանցում 1-ին փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | (286,112) | 286,112 | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | (609,159) | 609,159 | - |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | 7,616,386 | 87,694 | - | 7,704,080 |
| Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ | (6,738,408) | (13,348) | (122,130) | (6,873,886) |
| Դուրսգրումներ | - | - | (689,715) | (689,715) |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **20,272,938** | **360,458** | **614,474** | **21,247,870** |

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ – համախառն հաշվեկշռային արժեք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 13,929,666 | 381,673 | 188,323 | 14,499,662 |
| Փոխանցում 1-ին փուլ | 14,693 | (10,858) | (3,835) | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | (869,956) | 873,082 | (3,126) | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | (42,672) | (74,294) | 116,966 | - |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | 4,261,492 | 78,152 | 3,552 | 4,343,196 |
| Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ | (1,641,828) | (19,958) | (59,278) | (1,721,064) |
| Դուրսգրումներ | (3,674) | (6,607) | (14,822) | (25,103) |
| **Մնացորդը առ 30 սեպտեմբերի** | **15,647,721** | **1,221,190** | **227,780** | **17,096,691** |

Ստորև ներկայացված են անհատներին և իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելների համախառն հաշվեկշռային արժեքների նշանակալի փոփոխությունները 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում, որոնք հանգեցրել են կորստի պահուստի փոփոխություններին:

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք – համախառն հաշվեկշռային արժեք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 21,611,827 | - | 4,139,597 | 25,751,424 |
| Փոխանցում 1-ին փուլ | (327,997) | 327,997 | - | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | 10,906,900 | 392,745 | - | 11,299,645 |
| Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ | (12,509,658) | (111,583) | (50,260) | (12,671,501) |
| Դուրսգրումներ | - | | (3,272,177) | (3,272,177) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **19,681,072** | **609,159** | **817,160** | **21,107,391** |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ – համախառն հաշվեկշռային արժեք** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 12,732,395 | 436,283 | 226,687 | 13,395,365 |
| Փոխանցում 1-ին փուլ | 89,036 | (79,738) | (9,298) | - |
| Փոխանցում 2-րդ փուլ | (104,406) | 109,086 | (4,680) | - |
| Փոխանցում 3-րդ փուլ | (71,522) | (71,870) | 143,392 | - |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | 3,816,821 | 83,440 | - | 3,900,261 |

| հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Ամբողջությամբ կամ մասնակիորեն մարված ֆինանսական ակտիվներ | (2,527,286) | (94,065) | (118,323) | (2,739,674) |
| Դուրսգրումներ | (5,372) | (1,463) | (49,455) | (56,290) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **13,929,666** | **381,673** | **188,323** | **14,499,662** |

## Պարտքային որակի վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի պարտքային որակի վերաբերյալ: Եթե այլ նշում չի արվում, ֆինանսական ակտիվների համար աղյուսակում նշված գումարներն իրենցից ներկայացնում են համախառն հաշվեկշռային արժեքները: Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար աղյուսակում նշված գումարներն իրենցից ներկայացնում են համապատասխանաբար հանձնառության կամ երաշխավորության գումարները:

«1-ին փուլ», «2-րդ փուլ» և «3-րդ փուլ» տերմինների բացատրությունը ներկայացված է Ծանոթագրություն 4 (ե) (iv) կետում:

| հազ. դրամ | 30 սեպտեմբերի 2020թ. 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | |
|---|---|---|---|---|
| | 12-ամսյա ԱՊԿ | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով չարժեզրկված | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով արժեզրկված | Ընդամենը |
| ***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*** | | | | |
| B- -ից BBB- վարկանիշով | 3,150 | - | - | **3,150** |
| Առանց վարկանիշի | 13,355,459 | - | - | **13,355,459** |
| | **13,358,609** | - | - | 13,358,609 |
| **Կորստի պահուստ** | **(1,121)** | - | - | (1,121) |
| **Հաշվեկշռային արժեք** | **13,357,488** | - | - | 13,357,488 |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր*** | | | | |
| A+ վարկանիշով | 81,009 | - | - | **81,009** |
| B- ից B+ վարկանիշով | 6,357,537 | - | - | **6,357,537** |
| Առանց վարկանիշի | 7,775,175 | - | - | **7,775,175** |
| | **14,213,721** | - | - | **14,213,721** |
| **Կորստի պահուստ** | **(57,332)** | - | - | (57,332) |
| **Հաշվեկշռային արժեք** | **14,156,389** | - | - | 14,156,389 |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք*** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 20,272,938 | - | - | **20,272,938** |
| Ոչ ժամկետանց | - | 360,458 | | **360,458** |
| 91-365 օր ժամկետանց | - | - | 614,474 | **614,474** |
| Ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | - | **-** |

| | 30 սեպտեմբերի 2020թ. | | | |
|---|---|---|---|---|
| հազ. դրամ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | |
| | 12-ամսյա ԱՊԿ | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով չարժեզրկված | Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով արժեզրկված | Ընդամենը |
| | 20,272,938 | 360,458 | 614,474 | 21,247,870 |
| Կորստի պահուստ | (213,584) | (52,677) | (226,572) | (492,833) |
| Հաշվեկշռային արժեք | 20,059,354 | 307,781 | 387,902 | 20,755,037 |
| | | | | |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ**** | | | | |
| Ոչ ժամկետանց | 15,454,607 | 1,042,239 | - | **16,496,846** |
| Մինչև 30 օր ժամկետանց | 193,114 | 45,916 | - | **239,030** |
| 31-90 օր ժամկետանց | - | 133,035 | - | **133,035** |
| 91-180 օր ժամկետանց | - | - | 62,173 | **62,173** |
| 181-270 օր ժամկետանց | - | - | 67,969 | **67,969** |
| Ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 97,638 | **97,638** |
| | 15,647,721 | 1,221,190 | 227,780 | 17,096,691 |
| Կորստի պահուստ | (44,664) | (111,240) | (28,217) | (184,121) |
| Հաշվեկշռային արժեք | 15,603,057 | 1,109,950 | 199,563 | 16,912,570 |
| | | | | |
| ***Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր*** | | | | |
| B- -ից B+ վարկանիշով | 29,987,128 | - | - | **29,987,128** |
| Առանց վարկանիշի | 212,617 | - | - | **212,617** |
| | 30,199,745 | - | - | 30,199,745 |
| Կորստի պահուստ | (128,562) | - | - | (128,562) |
| Հաշվեկշռային արժեք – իրական արժեք | 30,199,745 | - | - | 30,199,745 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի պարտքային որակի վերաբերյալ:

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | |
| | **12-ամսյա ԱՊԿ** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ պարտքային առումով չարժեզրկված** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով արժեզրկված** | **Ընդամենը** |
| ***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*** | | | | |
| Ca3 վարկանիշով | 1,149,539 | - | - | **1,149,539** |
| B- -ից BBB- վարկանիշով | 10,033 | - | - | **10,033** |
| Առանց վարկանիշի | 13,766,683 | - | - | **13,766,683** |
| | **14,926,255** | **-** | **-** | **14,926,255** |
| **Կորստի պահուստ** | **(1,320)** | **-** | **-** | **(1,320)** |
| **Հաշվեկշռային արժեք** | **14,924,935** | **-** | **-** | **14,924,935** |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող բանկերին տրված վարկեր*** | | | | |
| AA- վարկանիշով | 79,255 | - | - | **79,255** |
| B- ից B+ վարկանիշով | 11,521,646 | - | - | **11,521,646** |
| Առանց վարկանիշի | 5,468,426 | - | - | **5,468,426** |
| | **17,069,327** | **-** | **-** | **17,069,327** |
| **Կորստի պահուստ** | **(56,088)** | **-** | **-** | **(56,088)** |
| **Հաշվեկշռային արժեք** | **17,013,239** | **-** | **-** | **17,013,239** |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – իրավաբանական անձիք*** | | | | |
| Արժեզրկման անհատական հայտանիշ չունեցող վարկեր | 19,681,072 | - | - | **19,681,072** |
| Մինչև 90 օր ժամկետանց | - | 609,159 | - | **609,159** |
| Ավելի քան 365 օր ժամկետանց | - | - | 817,160 | **817,160** |
| | **19,681,072** | **609,159** | **817,160** | **21,107,391** |
| **Կորստի պահուստ** | **(206,805)** | **(80,926)** | **(727,273)** | **(1,015,004)** |
| **Հաշվեկշռային արժեք** | **19,474,267** | **528,233** | **89,887** | **20,092,387** |
| ***Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր – անհատներ**** | | | | |
| Ոչ ժամկետանց | 13,864,600 | 289,485 | - | **14,154,084** |
| Մինչև 30 օր ժամկետանց | 65,066 | 2,749 | - | **67,816** |
| 31-90 օր ժամկետանց | - | 89,439 | - | **89,439** |
| 91-180 օր ժամկետանց | - | - | 66,428 | **66,428** |
| 181-270 օր ժամկետանց | - | - | 60,495 | **60,495** |
| Ավելի քան 271 օր ժամկետանց | - | - | 61,400 | **61,400** |
| | **13,929,666** | **381,673** | **188,323** | **14,499,662** |
| **Կորստի պահուստ** | **(25,954)** | **(30,350)** | **(18,023)** | **(74,327)** |
| **Հաշվեկշռային արժեք** | **13,903,712** | **351,323** | **170,300** | **14,425,335** |
| ***Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր*** | | | | |
| A- վարկանիշով | 891,373 | - | - | **891,373** |

| | 31 դեկտեմբերի 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | |
| | **12-ամսյա ԱՊԿ** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ պարտքային առումով չարժեզրկված** | **Ամբողջ ժամկետում ԱՊԿ, պարտքային առումով արժեզրկված** | **Ընդամենը** |
| BB- -ից B+ վարկանիշով | 33,873,273 | - | - | **33,873,273** |
| Առանց վարկանիշի | 203,482 | - | - | **203,482** |
| | **34,968,128** | **-** | **-** | **34,968,128** |
| **Կորստի պահուստ** | **(116,701)** | **-** | **-** | **(116,701)** |
| **Հաշվեկշռային արժեք – իրական արժեք** | **34,968,128** | **-** | **-** | **34,968,128** |

* ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ հաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառում են չօգտագործված փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները:

*Գրավ կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներ*

2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ ֆինանսական գործիքներ, որոնց համար կորստի պահուստ չէր ճանաչվել գրավի առկայության պատճառով:

| | **Ենթարկվածությունը պարտքային ռիսկին 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հազ. դրամ** | **Ենթարկվածությունը պարտքային ռիսկին 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ** |
|---|---|---|
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4,210,322 | 6,687,361 |
| Իրավաբանական անձանց տրված վարկեր | 3,421,837 | 1,864,913 |
| Անհատներին տրված վարկեր | 183,119 | 61,185 |

Ժամանակաշրջանի ընթացքում գրավի հետ կապված Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

## Պարտքային ռիսկի կենտրոնացում

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13,357,489 | 14,924,935 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4,210,322 | 6,687,361 |
| Բանկերին տրված վարկեր | 14,156,389 | 17,013,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 37,667,607 | 34,517,722 |
| Ներդրումային արժեթղթեր | 30,217,262 | 34,981,288 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 20,192 | 17,087 |
| **Պարտքային ռիսկին ընդհանուր առավելագույն ենթարկվածությունը** | **99,629,261** | **108,141,632** |

Որպես կանոն, արժեթղթերում ներդրումների և բանկերին տրված վարկերի համար գրավ չի պահանջվում, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի երկու պարտապան կամ կապակցված պարտապանների խմբեր (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու), որոնց հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածությունը գերազանցում է առավելագույն պարտքային ռիսկի 10%-ը: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս պայմանագրային կողմերի հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածությունը կազմում է 37,812,001 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 43,731,209 հազար դրամ):

### Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն

մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ, Բանկը և նրա պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

**հազ. դրամ**

| **Ֆինանսական ակտիվների տեսակներ** | **Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար** | **Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար** | **Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների զուտ գումար** | **Սնանկության դեպքում հաշվանցման ենթակա գումարներ** | **Զուտ գումար** |
|---|---|---|---|---|---|
| | | | | **Ֆինանսական գործիքներ** | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4,210,322 | - | 4,210,322 | 4,210,322 | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **4,210,322** | **-** | **4,210,322** | **4,210,322** | **-** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

**հազ. դրամ**

| **Ֆինանսական ակտիվների տեսակներ** | **Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար** | **Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության համախառն գումար** | **Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների զուտ գումար** | **Սնանկության դեպքում հաշվանցման ենթակա գումարներ** | **Զուտ գումար** |
|---|---|---|---|---|---|
| | | | | **Ֆինանսական գործիքներ** | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,687,361 | - | 6,687,361 | 6,687,361 | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **6,687,361** | **-** | **6,687,361** | **6,687,361** | **-** |

## (գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատու է ԱՊԿԿ-ն: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր և կորուստների սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

### *Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն*

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքի հսկողության միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ոչ տոկոսակիր | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **30 սեպտեմբերի 2020թ.** | | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 1,274,040 | - | - | - | - | 12,537,915 | 13,811,955 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4,210,322 | - | - | - | - | - | 4,210,322 |
| Բանկերին տրված վարկեր | 7,634,378 | - | - | 4,861,794 | 81,009 | 1,579,208 | 14,156,389 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 6,787,111 | 7,060,557 | 4,553,767 | 17,685,702 | 1,580,470 | - | 37,667,607 |
| Ներդրումային արժեթղթեր | 1,161,820 | 1,245,702 | 3,477,488 | 15,575,644 | 8,739,091 | 17,517 | 30,217,262 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | - | - | - | - | 20,192 | 20,192 |
| | 21,067,671 | 8,306,259 | 8,031,255 | 38,123,140 | 10,400,570 | 14,154,832 | 100,083,727 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 33,504 | - | 8,429 | 667,655 | - | - | 709,588 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 21,308,193 | 6,949,168 | 18,730,300 | 8,177,275 | 4,801 | 4,303,197 | 59,472,934 |
| Այլ ներգրավված միջոցներ | 43,616 | 3,067,633 | 78,173 | 378,691 | 112,851 | - | 3,680,964 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | 3,945 | - | - | 7,900,170 | - | 7,904,115 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 5,708 | 6,302 | 12,712 | 155,232 | 284,263 | - | 464,217 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | - | - | - | 313,558 | 313,558 |
| | 21,391,021 | 10,027,048 | 18,829,614 | 9,378,853 | 8,302,085 | 4,616,755 | 72,545,376 |
| | (323,350) | (1,720,789) | (10,798,359) | 28,744,287 | 2,098,485 | 9,538,077 | 27,538,351 |

Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների ճեղքվածքի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնական ֆինանսական գործիքների համար 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Մինչև 3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1-5 տարի | Ավելի քան 5 տարի | Ոչ տոկոսակիր | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2019թ.** | | | | | | | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 3,138,123 | - | - | - | - | 12,111,630 | 15,249,753 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,687,361 | - | - | - | - | - | 6,687,361 |
| Բանկերին տրված վարկեր | 11,984,330 | - | - | 4,779,654 | 79,255 | 170,000 | 17,013,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,659,078 | 2,116,030 | 6,233,182 | 22,597,537 | 1,911,895 | - | 34,517,722 |
| Ներդրումային արժեթղթեր | 104,400 | 4,378,562 | 2,792,018 | 17,948,959 | 9,744,189 | 13,160 | 34,981,288 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | - | - | - | - | - | 17,087 | 17,087 |
| | 23,573,292 | 6,494,592 | 9,025,200 | 45,326,150 | 11,735,339 | 12,311,877 | 108,466,450 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | 18,616 | 8,429 | 667,656 | - | - | 694,701 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 19,656,114 | 13,627,357 | 19,900,851 | 6,257,868 | 600 | 8,729,222 | 68,172,012 |
| Այլ ներգրավված միջոցներ | 97,617 | 30,539 | 68,529 | 3,420,072 | 140,667 | - | 3,757,424 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | 127,919 | - | - | - | 7,531,253 | - | 7,659,172 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 5,080 | 5,214 | 10,924 | 137,048 | 321,460 | - | 479,726 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | - | - | - | 284,520 | 284,520 |
| | 19,886,730 | 13,681,726 | 19,988,733 | 10,482,644 | 7,993,980 | 9,013,742 | 81,047,555 |
| | 3,686,562 | (7,187,134) | (10,963,533) | 34,843,506 | 3,741,359 | 3,298,135 | 27,418,895 |

### *Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | Սեպտեմբերի 30, 2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | Դեկտեմբերի 31, 2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ |
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4.4% | 1.8% | 0.7% | 5.6% | 2.3% | - |
| Բանկերին տրված վարկեր | - | 3.4% | 0.8% | 5.6% | 3.4% | 1.0% |
| Հաճախորդներին տրված վարկեր | 11.6% | 7.4% | 7.3% | 12.4% | 8.0% | 7.3% |
| Ներդրումային արժեթղթեր | 9.6% | - | - | 9.9% | 6.4% | - |

**Տոկոսակիր**

| | Սեպտեմբերի 30, 2020թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | Դեկտեմբերի 31, 2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| պարտավորություններ | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7.9% | - | - | 7.9% | - | - |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 1.0% | 0.9% | - | 1.6% | 0.6% | - |
| - Ժամկետային ավանդներ | 8.5% | 4.4% | 2.2% | 9.2% | 4.3% | 2.2% |
| Այլ ներգրավված միջոցներ | 8.6% | 8.3% | - | 8.8% | 8.3% | - |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | 6.5% | 6.5% | - | 6.5% | 6.5% |

### *Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն*

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է համապատասխանաբար տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2020թ. սեպտեմբերի 30-ի ու 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի հիման վրա:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ նվազում | 29,617 | (29,654) |
| 100 բկ զուգահեռ աճ | (29,617) | 29,654 |

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2020թ. սեպտեմբերի 30-ի ու 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | 30 սեպտեմբերի 2020թ. | | 31 դեկտեմբերի 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ | Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ | Սեփական կապիտալ հազ. դրամ |
| 100 բկ զուգահեռ նվազում | - | 787,048 | - | 962,947 |
| 100 բկ զուգահեռ աճ | - | (787,048) | - | (962,947) |

## *(ii) Արժութային ռիսկ*

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Բանկը չի հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ հազ. դրամ | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,033,348 | 6,389,461 | 2,379,953 | 9,193 | 13,811,955 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 2,013,357 | 195,494 | 2,001,471 | - | 4,210,322 |
| Բանկերին տրված վարկեր | 70,000 | 11,801,143 | 2,285,224 | 22 | 14,156,389 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 12,344,698 | 25,193,648 | 129,261 | - | 37,667,607 |
| Ներդրումային արժեթղթեր | 30,217,262 | - | - | - | 30,217,262 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 9,902 | 10,240 | 50 | - | 20,192 |
| **Ընդամենը ակտիվներ** | **49,688,567** | **43,589,986** | **6,795,959** | **9,215** | **100,083,727** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 709,588 | - | - | - | 709,588 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 19,726,373 | 38,319,068 | 1,425,723 | 1,770 | 59,472,934 |
| Այլ ներգրավված միջոցներ | 650,281 | 3,030,683 | - | - | 3,680,964 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | 2,540,868 | 5,363,247 | - | 7,904,115 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 464,217 | - | - | - | 464,217 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 267,459 | 27,116 | 3,612 | 15,371 | 313,558 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **21,817,918** | **43,917,735** | **6,792,582** | **17,141** | **72,545,376** |
| **Զուտ դիրքը** | **27,870,649** | **(327,749)** | **3,377** | **(7,926)** | **27,538,351** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ՀՀ դրամ հազ. դրամ | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,211,819 | 4,198,082 | 5,798,064 | 41,788 | 15,249,753 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,495,339 | 192,022 | - | - | 6,687,361 |
| Բանկերին տրված վարկեր | 1,571,168 | 14,905,918 | 536,153 | - | 17,013,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 9,152,652 | 25,226,672 | 138,398 | - | 34,517,722 |
| Ներդրումային արժեթղթեր | 33,493,215 | 1,488,073 | - | - | 34,981,288 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 8,970 | 8,105 | 9 | 3 | 17,087 |
| **Ընդամենը ակտիվներ** | **55,933,163** | **46,018,872** | **6,472,624** | **41,791** | **108,466,450** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 694,701 | - | - | - | 694,701 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 22,894,857 | 43,873,875 | 1,367,092 | 36,188 | 68,172,012 |
| Այլ ներգրավված միջոցներ | 718,494 | 3,038,930 | - | - | 3,757,424 |
| Ստորադաս փոխառություններ | - | 2,536,666 | 5,122,506 | - | 7,659,172 |

| | ՀՀ դրամ հազ. դրամ | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| մայր կազմակերպությունից | | | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | 479,726 | - | - | - | 479,726 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 241,546 | 42,707 | 267 | - | 284,520 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 25,029,324 | 49,492,178 | 6,489,865 | 36,188 | 81,047,555 |
| **Զուտ դիրքը** | 30,903,839 | (3,473,306) | (17,241) | 5,603 | 27,418,895 |

Ստորև աղյուսակում ներկայացված 2020թ. սեպտեմբերի 30-ի ու 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում էր որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով | (32,775) | (347,331) |
| ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով | 338 | (1,724) |

2020թ. սեպտեմբերի 30-ի ու 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ԱՊԿԿ-ի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ ամբողջ Բանկում:

Գանձապետարանն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման բաժնի և Գանձապետարանի կողմից ներկայացվող հաշվետվությունների հիման վրա:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է հետ կանչվել/օգտագործվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **30 սեպտեմբերի 2020թ.** | | | | | | | |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 35,587 | - | - | 35,188 | 772,057 | 842,832 | 709,588 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 13,701,649 | 12,019,775 | 7,286,939 | 19,613,179 | 8,785,995 | 61,407,537 | 59,472,934 |
| Այլ ներգրավված միջոցներ | 10,157 | 41,737 | 3,156,817 | 101,411 | 593,436 | 3,903,558 | 3,680,964 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | - | 256,617 | 256,907 | 10,479,120 | 10,992,644 | 7,904,115 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 5,831 | 12,013 | 18,020 | 36,039 | 659,034 | 730,937 | 464,217 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | - | - | 313,558 | 313,558 | 313,558 |
| **Ընդամենը** | **13,753,224** | **12,073,525** | **10,718,393** | **20,042,724** | **21,603,200** | **78,191,066** | **72,545,376** |
| **Փոխատվության հանձնառություններ** | **7,664,400** | **-** | **-** | **-** | **-** | **7,664,400** | **7,664,400** |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2019թ.** | | | | | | | |
| **Ոչ ածանցյալ պարտավորություններ** | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | - | 34,236 | 35,335 | 795,656 | 865,227 | 694,701 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 19,425,743 | 9,132,982 | 13,980,723 | 20,747,716 | 6,649,905 | 69,937,069 | 68,172,012 |
| Այլ ներգրավված միջոցներ | 10,467 | 154,757 | 45,648 | 222,214 | 3,771,454 | 4,204,540 | 3,757,424 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | 243,646 | - | 248,947 | 10,479,593 | 10,972,186 | 7,659,172 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 5,831 | 11,663 | 17,495 | 35,340 | 713,092 | 783,421 | 479,726 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | - | - | - | - | 284,520 | 284,520 | 284,520 |
| **Ընդամենը** | **19,442,041** | **9,543,048** | **14,078,102** | **21,289,552** | **22,694,220** | **87,046,963** | **81,047,555** |
| **Փոխատվության հանձնառություններ** | **4,148,117** | **-** | **-** | **-** | **-** | **4,148,117** | **4,148,117** |

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրով սահմանված մարման ժամկետների: Ստորև ներկայացված է այս ավանդների գծով մնացորդների դասակարգումն ըստ սահմանված մարման ժամկետների:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Մինչև 1 ամիս ժամկետով | 3,424,395 | 2,234,308 |
| 1-ից 3 ամիս ժամկետով | 7,927,329 | 3,426,129 |
| 3-ից 12 ամիս ժամկետով | 21,139,846 | 28,022,638 |
| Ավելի քան 1 տարի ժամկետով | 3,135,698 | 5,474,627 |
| | **35,627,268** | **39,157,702** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13,811,955 | - | - | - | - | - | - | 13,811,955 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 4,210,322 | - | - | - | - | - | - | 4,210,322 |
| Բանկերի տրված վարկեր | 8,566,473 | 577,113 | - | 4,861,794 | - | 151,009 | - | 14,156,389 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 232,228 | 877,263 | 10,707,906 | 14,671,133 | 10,903,209 | - | 275,868 | 37,667,607 |
| Ներդրումային արժեթղթեր | 1,124,597 | 37,223 | 4,723,190 | 15,575,644 | 8,739,091 | 17,517 | - | 30,217,262 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | - | - | - | - | 655,054 | - | - | 655,054 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 1,626,349 | - | 1,626,349 |
| Առգրավված ակտիվներ | - | - | - | - | - | 881,660 | - | 881,660 |
| Այլ ակտիվներ | - | - | - | - | - | 421,632 | - | 421,632 |
| **Ընդամենը ակտիվներ** | **27,945,575** | **1,491,599** | **15,431,096** | **35,108,571** | **20,297,354** | **3,098,167** | **275,868** | **103,648,230** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 33,504 | - | 8,429 | 667,655 | - | - | - | 709,588 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 13,667,914 | 11,839,771 | 25,754,644 | 8,205,804 | 4,801 | - | - | 59,472,934 |
| Այլ ներգրավված միջոցներ | 9,280 | 34,336 | 3,145,806 | 378,691 | 112,851 | - | - | 3,680,964 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | - | 3,945 | - | 7,900,170 | - | - | 7,904,115 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | - | - | - | - | - | - | - | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | - | - | 592,862 | - | 592,862 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 1,725 | 3,983 | 19,014 | 155,232 | 284,263 | - | - | 464,217 |
| Այլ պարտավորություններ | - | - | - | - | - | 410,244 | - | 410,244 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **13,712,423** | **11,878,090** | **28,931,838** | **9,407,382** | **8,302,085** | **1,003,106** | **-** | **73,234,924** |
| **Զուտ դիրքը** | **14,233,152** | **(10,386,491)** | **(13,500,742)** | **25,701,189** | **11,995,269** | **2,095,061** | **275,868** | **30,413,306** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

| | **Ցպահանջ և մինչև 1 ամիս** | **1-ից 3 ամիս** | **3-ից 12 ամիս** | **1-ից 5 տարի** | **Ավելի քան 5 տարի** | **Անժամկետ** | **Ժամկետանց** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15,249,753 | - | - | - | - | - | - | 15,249,753 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,687,361 | - | - | - | - | - | - | 6,687,361 |
| Բանկերի տրված վարկեր | 11,441,224 | 543,106 | - | 4,779,654 | - | 249,255 | - | 17,013,239 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 384,258 | 698,682 | 6,556,867 | 17,707,526 | 9,044,766 | - | 125,623 | 34,517,722 |
| Ներդրումային արժեթղթեր | 3,756 | 100,644 | 7,170,580 | 17,948,959 | 9,744,189 | 13,160 | - | 34,981,288 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | - | - | - | - | 491,361 | - | - | 491,361 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 1,411,137 | - | 1,411,137 |
| Առգրավված ակտիվներ | - | - | - | - | - | 832,586 | - | 832,586 |
| Այլ ակտիվներ | - | - | - | - | - | 284,363 | - | 284,363 |
| **Ընդամենը ակտիվներ** | **33,766,352** | **1,342,432** | **13,727,447** | **40,436,139** | **19,280,316** | **2,790,501** | **125,623** | **111,468,810** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | - | - | 27,045 | 667,656 | - | - | - | 694,701 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 19,396,218 | 8,952,852 | 33,534,945 | 6,287,397 | 600 | - | - | 68,172,012 |
| Այլ ներգրավված միջոցներ | 9,510 | 88,107 | 99,068 | 3,420,072 | 140,667 | - | - | 3,757,424 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | - | 127,919 | - | - | 7,531,253 | - | - | 7,659,172 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | - | - | - | 137,877 | - | - | - | 137,877 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | - | - | - | 505,369 | - | 505,369 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 1,587 | 3,492 | 16,138 | 137,048 | 321,461 | - | - | 479,726 |
| Այլ պարտավորություններ | - | - | - | - | - | 349,880 | - | 349,880 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **19,407,315** | **9,172,370** | **33,677,196** | **10,650,050** | **7,993,981** | **855,249** | **-** | **81,756,161** |
| **Զուտ դիրքը** | **14,359,037** | **(7,829,938)** | **(19,949,749)** | **29,786,089** | **11,286,335** | **1,935,252** | **125,623** | **29,712,649** |

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական միջոցը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակի համար բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այլ կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների ներկայացված աուդիտի չենթարկված հարաբերակցությունը կազմում է 392.64% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 371.94%).

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի (նվազագույնը՝ 60%) հետ համապատասխանությունը գնահատելու համար:

### (ե) Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն ուղղակի կամ անուղղակի վնաս կրելու ռիսկն է, որը պայմանավորված է Բանկի գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի հետ կապված բազմաթիվ պատճառներով, ինչպես նաև պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերից տարբեր արտաքին գործոնների, օրինակ՝ օրենսդրական և կանոնակարգող պահանջների և կորպորատիվ վարքագծի ընդունված ստանդարտների ազդեցությամբ: Գործառնական ռիսկն առաջանում է Բանկի բոլոր գործառնությունների հետ կապված:

Բանկի նպատակն է այնպես կառավարել գործառնական ռիսկը, որ հնարավոր լինի հավասարակշռել ֆինանսական կորուստ կրելուց և Բանկի հեղինակությանը վնաս հասցնելուց խուսափելն ու ծախսերի կրճատումը և նորարարությունները: Բոլոր դեպքերում, Բանկի քաղաքականությունը պահանջում է համապատասխանության ապահովում բոլոր կիրառելի օրենսդրական և կանոնակարգող պահանջների հետ:

Բանկը գործառնական ռիսկը կառավարում է ներդնելով ներքին հսկողության մեխանիզմներ, որոնք ղեկավարությունը համարում է անհրաժեշտ Բանկի գործունեության յուրաքանչյուր ոլորտում:

## 21 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի հիմնական և ընդհանուր նորմատիվային կապիտալների և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշները («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինեն սահմանված նվազագույն ցուցանիշներից: 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս նվազագույն ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 9% և 12%: (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում էր միայն երկրորդ ցուցանիշը՝ 12%)
2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Հիմնական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 26,249,100 | 26,249,100 |
| Էմիսիոն եկամուտ | 257,149 | 257,149 |
| Գլխավոր պահուստ | 128,028 | 51,292 |
| Չբաշխված շահույթ | 1,476,791 | 1,088,055 |
| Նվազեցումներ | (1,749,737) | (1,551,138) |
| **Ընդամենը հիմնական կապիտալ** | **26,361,331** | **26,094,458** |
| **Լրացուցիչ կապիտալ** | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստ | 1,937,141 | 2,208,757 |
| Ստորադաս փոխառություններ | 7,912,504 | 7,470,555 |
| Լրացուցիչ կապիտալի նվազեցում՝ ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերի համաձայն | (1,941,245) | (1,850,975) |
| **Ընդամենը լրացուցիչ կապիտալ** | **7,908,400** | **7,828,337** |
| **Ընդամենը կապիտալ** | **34,269,731** | **33,922,795** |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ** | **98,050,948** | **89,963,136** |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)** | **35.0%** | **37.7%** |
| **Ընդամենը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը (հիմնական կապիտալի հարաբերակցություն)** | **26.9%** | **29.0%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

# 22 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառություններն ըստ դասակարգերի: Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ այդ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

| | 30 սեպտեմբերի 2020թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի գծով հանձնառություններ | 5,774,871 | 2,629,153 |
| Վարկային քարտերի գծով հանձնառություններ | 890,254 | 567,502 |
| Երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 999,275 | 951,462 |
| | **7,664,400** | **4,148,117** |

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարման ժամկետը:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս փոխատվության հանձնառություններից 6,039,830 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,313,534 հազար դրամ) գումարով հանձնառությունները վերաբերում են տաս հաճախորդի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հինգ հաճախորդի), ինչը վկայում է էական պարտքային ռիսկի առկայության մասին:

# 23 Պայմանական դեպքեր

## (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ունի մինչև 500,000 հազար դրամի չափով ապահովագրական ծածկույթ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար, ներառյալ` շենքերը և սարքավորումները, գործունեության ընդհատումը և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ գույքին վնաս հասցնելուց` Բանկի գույքի հետ կապված տեղի ունեցած պատահարների կամ Բանկի գործունեության հետևանքով: Բանկն ապահովագրել է նաև դրամարկղերը 110,000 հազար դրամի չափով` ֆիզիկական վնասից և գողությունից:

## (բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող նաշնակալի հայցերի մասին:

## (գ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները` Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

# 24 Գործարքներ կապակցված կողմերի հետ

## (ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Բիբլոս Բանկ Էս-Էյ-Էլ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը: Մայր կազմակերպությունը հրապարակում է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները: Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Ֆրանսուա Բասիլը:

## (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2020թ. սեպտեմբերի 30-ին և 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ | 47,280 | 157,577 | 64,385 | 168,714 |

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Սեպտեմբերի 30, 2020թ. | Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | Դեկտեմբերի 31, 2019թ. | Միջին արդյունավետ տոկոսադրույք, % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| Տրված վարկեր (համախառն) | 209,455 | 9.6% | 223,513 | 9.6% |
| Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ | (584) | | (348) | |
| Ստացված ավանդներ | 1,471,570 | 1.4% | 1,392,372 | 4.5% |

Կապակցված կողմերին փոխառությունները տրամադրված են ՀՀ դրամով և արտարժույթով և ենթակա են մարման 1-ից 20 տարվա ընթացքում՝ կախված փոխառության տեսակից: Փոխառություններն ապահովված են համապատասխան տեսակի գրավով, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 12-ի (բ) կետում:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2020թ. սեպտեմբերի 30-ին և 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների համար:

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | | | |
| Տոկոսային եկամուտ | 5,181 | 15,644 | 5,256 | 15,715 |

| | Հուլիսի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2020թ. Սեպտեմբերի 30, 2020թ. հազ. դրամ | Հուլիսի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ | Հունվարի 1, 2019թ. Սեպտեմբերի 30, 2019թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Տոկոսային ծախս | (15,741) | (46,898) | (14,313) | (42,125) |
| (Պարտքային վնաս)/պարտքի հակադարձում | (136) | (236) | (2) | 205 |

## (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են մայր կազմակերպությունը, վերջինիս այլ դուստր կազմակերպությունները և չվերահսկող բաժնետերերին: Ստորև ներկայացված են 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2020թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Մայր կազմակերպություն | | Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ | | Մայր կազմակերպության հետ կապակցված այլ ընկերություններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | Ընդամենը հազ. դրամ |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 546,511 | | 86,551 | | - | | 633,063 |
| - եվրոյով | 724,352 | | 1,338,614 | | - | | 2,062,966 |
| - այլ արտարժույթով | 844 | | - | | - | | 844 |
| **Պարտավորություններ** | | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | | - | 2,746,939 | 4.4% | 2,746,939 |
| Այլ ներգրավված միջոցներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | | - | 3,030,683 | 8.3% | 3,030,683 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 2,540,866 | 6.5% | - | | - | | 2,540,866 |
| - եվրոյով | 5,363,248 | 6.5% | - | | - | | 5,363,248 |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 6,960 | | - | | - | | 6,960 |
| Տոկոսային ծախս | (372,716) | | - | | (255,107) | | (627,823) |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ | 6,322 | | - | | - | | 6,322 |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | (5,811) | | (915) | | - | | (6,726) |
| Մասնագիտական ծառայություններ | (1,034) | | - | | - | | (1,034) |

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ինն ամիսների շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Մայր կազմակերպություն | | Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ | | Մայր կազմակերպության հետ կապակցված այլ ընկերություններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսա-դրույք % | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ-տոկոսա-դրույք % | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսա-դրույք % | Ընդամենը հազ. դրամ |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 903,023 | - | 61,307 | - | - | - | 964,330 |
| - եվրոյով | 223,268 | - | 1,979,829 | - | - | - | 2,203,097 |
| - այլ արտարժույթով | 22,789 | - | - | - | - | - | 22,789 |
| **Պարտավորություններ** | | | | | | | |
| Այլ ներգրավված միջոցներ | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | - | - | | - | 3,038,930 | 8.3% | 3,038,930 |
| Ստորադաս փոխառություններ մայր կազմակերպությունից | | | | | | | |
| - ԱՄՆ դոլարով | 2,536,666 | 6.5% | - | - | - | - | 2,536,666 |
| - եվրոյով | 5,122,506 | 6.5% | - | - | - | - | 5,122,506 |
| **Շահույթ կամ վնաս** | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | 9,708 | - | 1 | - | - | - | 9,709 |
| Տոկոսային ծախս | (370,455) | - | - | - | (186,830) | - | (557,285) |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ | 6,226 | - | - | - | - | - | 6,226 |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | (6,904) | - | (323) | - | - | - | (7,227) |
| Մասնագիտական ծառայություններ | (1,470) | - | - | - | - | - | (1,470) |

Կապակցված կողմերի հետ գործարքների գծով դրամական միջոցները և դրանց համարժեքները գրավով ապահովված չեն:

# 25 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2020թ. սեպտեմբերի 30-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ ՀՀ դրամով արտահայտված հաճախորդներին տրված վարկերի և հաճախորդների ընթացիկ հաշիվների և ժամկետային ավանդների իրական արժեքների, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի իրական արժեքը գերազանցում էր վերջիններիս 37,667,607 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 34,517,722 հազար դրամ) հաշվեկշռային արժեքը 859,515 հազար դրամով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,931,894 հազար դրամով), իսկ հաճախորդների ընթացիկ հաշիվների և ժամկետային ավանդների իրական արժեքը ցածր էր վերջիններիս 59,472,934 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 68,172,012 հազար դրամ) հաշվեկշռային արժեքից 39,598 հազար դրամով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում էր 37,202 հազար դրամով): Հաճախորդներին տրված վարկերի և հաճախորդների ընթացիկ հաշիվների և ժամկետային ավանդների իրական արժեքների չափումները դասվում են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Ներդրումային արժեթղթեր | | | | |
| - Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ | - | 30,199,745 | - | 30,199,745 |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| **հազ. դրամ** | **1-ին մակարդակ** | **2-րդ մակարդակ** | **3-րդ մակարդակ** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| Ներդրումային արժեթղթեր | | | | |
| - Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներ | - | 34,968,128 | - | 34,968,128 |

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար՝ չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդները և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: